ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

No 641-Ա «9» հունիսի 2023 թ.

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 533-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 8-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման թեստավորման փուլի հարցաշարը հաստատելու մասին» 533-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող Կարինե Մանուկյանին՝ հաստատված հարցաշարը տեղադրել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքում:

6/9/2023

X

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

**ՆԱԽԱՐԱՐ՝** Signed by: KHZMALYAN ARAYIK 3101800129 **ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ**

***/պարտականությունները կատարող/***

Հավելված
Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2023 թվականի
հունիսի 9-ի N 641 -Ա հրամանի

«Հավելված
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2022 թվականի ապրիլի
8-ի N 533-Ա հրամանի

# ՀԱՐՑԱՇԱՐ

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ

## ***ՀՀ Սահմանադրություն***

*Հարց 1* **Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են՝**

- Սահմանադրությամբ կամ օրենքներով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 6*

*Հարց 2* **Ո՞ր օրենքն ունի հետադարձ ուժ:**

- Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը;

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 72*

*Հարց 3* **Ո՞ր օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:**

- Անձի իրավական վիճակը վատթարացնող:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 73, մաս 1*

*Հարց 4* **Տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք ունի՝**

- Յուրաքանչյուր ոք՝ առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, մաս 1*

*Հարց 5*. **Նշվածներից ո՞ր դեպքում է հանցագործության համար մեղադրվողը համարվում անմեղ:**

- Քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 66*

*Հարց 6*. **Հայաստանի Հանրապետությունում գործում են՝**

- Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 163, մաս 1*

*Հարց 7* **Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝**

- Օրենքով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 60, մաս 7*

*Հարց 8* **Նշվածներից ո՞ր մարմիններն են ՀՀ-ում իրականացնում արդարադատություն:**

- Միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 162, մաս 1*

*Հարց 9* **Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը՝**

- Օրենքով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 47, մաս 6*

*Հարց 10* **Ո՞վ է ստորագրում կառավարության որոշումները՝**

- ՀՀ Վարչապետը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 153, մաս 2*

*Հարց 11* **Նշվածներից ո՞ր դատարանն է օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:**

- Սահմանադրական դատարանը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 168, կետ 12*

*Հարց 12* **Ո՞վ է նշանակում և ազատում մարզպետներին՝**

- ՀՀ կառավարությունը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 160, մաս 2*

*Հարց 13* **Ո՞վ ունի կրթության իրավունք՝**

- Յուրաքանչյուր ոք:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1*

*Հարց 14* **Ո՞ր իրավական ակտով են սահմանվում պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը:**

- Օրենքով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1*

*Հարց 15* **Ո՞ր կրթությունն է անվճար պետական ուսումնական հաստատություններում:**

- Միջնակարգ:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1*

*Հարց 16.* **Ո՞ր տարիքի երեխաներին է արգելվում ընդունել մշտական աշխատանքի:**

- Մինչև 16 տարեկան:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 57, մաս 4*

*Հարց 17* **Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը:**

- Օրենքով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 185, մաս 2*

*Հարց 18* **Որո՞նք են ՀՀ վարչատարածքային միավորները:**

- Մարզերը և համայնքները:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 121*

*Հարց 19* **Ովքե՞ր չեն կարող ընտրել, ընտրվել և մասնակցել հանրաքվեին:**

- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 48, մաս 4*

*Հարց 20* **Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքն ու՞մ է պատկանում:**

- Պատգամավորներին, Ազգային ժողովի խմբակցություններին և Կառավարությանը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 109, մաս 1*

*Հարց 21* **Ո՞ր պաշտոնատար անձանցից է կազմված ՀՀ կառավարությունը:**

- Վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 147 մաս 1*

*Հարց 22* **Ո՞վ է տնօրինու համայնքի սեփականությունը և ինչպե՞ս:**

- Համայնքի ավագանին՝ օրենքով սահմանված կարգով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 184, մաս 3*

*Հարց 23* **Ո՞վ է նշանակում հանրաքվեն:**

- ՀՀ նախագահը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 206*

*Հարց 24* **Նշվածներից որ բնագավառներն են գտնվում պետության հոգածության և պաշտպանության ներքո:**

- Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 15, մաս 2*

*Հարց 25* **Հայաստանի Հանրապետության զինանշանն է՝**

- Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 21, մաս 2*

*Հարց 26* **Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝**

- ՀՀ դրոշը, ՀՀ զինանշանը, ՀՀ օրհներգը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 21*

*Հարց 27* **Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են՝**

- Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 14, մաս 1*

*Հարց 28* **Ու՞մ կողմից է ընտրվում ՀՀ Նախագահը, ի՞նչ ժամկետով:**

- Հանրապետության Նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ յոթ տարի ժամկետով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 124 , մաս 1 և հոդված 125, մաս 1*

*Հարց 29* **Ու՞մ առաջարկությամբ և ո՞վ է Կառավարության կազմում կատարում փոփոխություններ:**

- Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 131*

*Հարց 30* **Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են՝**

- Սեփականության բոլոր ձևերը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 10, մաս 1*

*Հարց 31* **Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով և ո՞ր դեպքում՝**

- Անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 27, մաս 1 կետ 5

*Հարց 32* **Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարո՞ղ է սահմանափակվել:**

- Կարող է՝ միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 34, մաս 4

*Հարց 33* **Ո՞ր պատիժներն են արգելվում:**

- Մարմնական:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 26, մաս 2

*Հարց 34* **Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների՝**

- Դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 36, մաս 1

*Հարց 35* **Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել՝**

- Բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 192, մաս 2*

*«Կրթության մասին» օրենք*

*Հարց 36* **Ինչպե՞ս է սահմանվում «կրթություն» հասկացությունը:**

- Անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 1*

*Հարց 37* **Ի՞նչ ենք հասկանում «ուսուցում» ասելով՝**

- Կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 1.1 կետ*

*Հարց 38* **Ինչպե՞ս է սահմանվում «ուսումնական հաստատություն» հասկացությունը:**

- Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 4*

*Հարց 39* **Ո՞ր ուսումնական հաստատությունն է կոչվում կրթահամալիր:**

- Տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորումը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 8*

*Հարց 40* **Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը՝**

- Կրթության զարգացման պետական ծրագիրն է:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 4*

*Հարց 41* **Ո՞ր մարմինը և ո՞ւմ ներկայացմամբ է հաստատում կրթության զարգացման պետական ծրագիրը:**

- Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 4*

*Հարց 42* **Ու՞մ և ինչպե՞ս է պետությունը ապահովում տարրական ընդհանուր կրթական ծրագրով նախատեսված դասագրքերով:**

- Տարրական հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ դասարանների սովորողներին պետական բյուջեի միջոցների հաշվին՝ անվճար:

«Կրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 4

*Հարց 43* **Կրթության բովանդակությունն ապահովում է՝**

- Սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 1*

*Հարց 44* **Կրթության բովանդակությունն ապահովում է՝**

- Սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 2*

*Հարց 45* **Կրթության բովանդակությունն ապահովում է՝**

- Հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 3*

*Հարց 46* **Կրթության բովանդակությունն ապահովում է՝**

- Հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 2, կետ 4*

*Հարց 47* **Երբ է ՞և ավարտվում ուսումնական տարին:**

- Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և ավարտվում է օգոստոսի 31-ին:

*Հանրակրթության մասին» օրենք, հոդված 15, մաս 1*

*Հարց 48* **Ո՞ր մարմինը կարող է հիմնադրել ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ:**

- ՀՀ կառավարությունը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 29, մաս 4*

*Հարց 49* **Նշվածներից ո՞վքեր կարող են լինել ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր:**

- Ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 29, մաս 3*

*Հարց 50* **Ուսումնական հաստատությունը ե՞րբ է համարվում ստեղծված:**

- Հիմնադրի (հիմնադիրների) կողմից հաստատության կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 30, մաս 2*

*Հարց 51* **Ինչպե՞ս է վերակազմակերպվում ուսումնական հաստատությունը:**

- Միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևերով:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 33, մաս 2*

*Հարց 52* **Ե՞րբ է ուսումնական հաստատության լուծարումը համարվում ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված:**

- Իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 35, մաս 4*

*Հարց 53* **Նշվածներից ո՞րն է կրթության բնագավառում՝ ՀՀ կառավարության իրավասություններից:**

- Պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հաստատումը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 36, կետ 5*

*Հարց 54* **Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում կրթական քաղաքականության իրականացումը:**

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 36, կետ*

*Հարց 55* **Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը:**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 1*

*Հարց 56* **Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումն ու հրատարակումը:**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 3*

*Հարց 57* **Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները:**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 5*

*Հարց 58* **Նշվածներից ո՞ր մարմինն է համաձայնություն տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ:**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 15.1*

*Հարց 59* **Նշվածներից ո՞ր մարմինն (կամ ղեկավարն) է համակարգում և վերահսկում դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում:**

- Մարզպետը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 38, մաս 3*

*Հարց 60* **Հանրակրթության բնագավառում նշվածներից ո՞րն է մարզպետի իրավասություններից:**

- Պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցման, շահագործման և պահպանման ապահովումը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 38, կետ 4*

*Հարց 61* **Նշվածներից ո՞րն է հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասություններից:**

- Ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան՝ աջակցել համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 39, կետ 1*

*Հարց 62* **Ի՞նչ վճարովի այլ աշխատանք կարող է միաժամանակ կատարել պետական ուսումնական հաստատության տնօրենը:**

- Գիտամանկավարժական և ստեղծագործական:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 40, մաս 5, 2-րդ պարբ.*

*Հարց 63* **Ի՞նչ նորմատիվ ակտով են սահմանվում ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները, դրանց ձևավորման կարգը և լիազորությունները:**

- Ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 40, մաս 4*

*Հարց 64* **Ինչպե՞ս է իրականացվում կրթական ծրագրերի և նախադպրոցական ծառայությունների լիցենզավորումը:**

- Օրենքով և ՀՀ կառավարության սահմանած կարգով:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 3*

*Հարց 65* **Ի՞նչերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:**

- Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը և նախադպրոցական ծառայությունը:

«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 1

*Հարց 66* **Ո՞ր դեպքում կարող են իրականացվել օրենքով նախատեսված կրթական ծրագրեր:**

- Միայն լիցենզիայի առկայության դեպքում:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 41, մաս 1*

*Հարց 67* **Ու՞մ է ուսումնական հաստատությունը հանձնում համապատասխան փաստաթուղթ (վկայական, ատեստատ, դիպլոմ):**

- Կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 44, մաս 1*

*Հարց 68* **Ո՞ր պահից են ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք ստանում:**

- Լիցենզավորման պահից:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 44, մաս 3*

*Հարց 69* **Ի՞նչ նպատակներով կարող է օգտագործվել պետական ուսումնական հաստատությունների գույքն՝ օտարվելու դեպքում:**

- Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:

*«Կրթության մասին» օրենքի հոդված 45, մաս4*

*Հարց 70* **Կառավարման ո՞ր մարմինն է հավելյալ վարձատրություն սահմանում սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:**

- ՀՀ կառավարությունը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 50, մաս 3*

*Հարց 71* **Ո՞րն է տարրական դպրոցի նպատակը:**

- Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 18, մաս 4*

*Հարց 72* **Ո՞րն է միջին դպրոցի նպատակը:**

- Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 18, մաս 5*

*Հարց 73* **Ու՞մ վրա չի տարածվում պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը:**

- Պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ

սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի խմբերի վրա:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 18, մաս 7*

*Հարց 74* **Ու՞մ վրա չի տարածվում պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման՝ օրենքով սահմանափակված տարիքային սահմանափակումը:**

- Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար տարիքային սահմանափակումը չի տարածվում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի:

*«Կրթության մասին» օրենք, հոդված 18, մաս 7*

*Հանրակրթության մասին» օրենք*

*Հարց 75* **Ինչպե՞ս է սահմանվում «հանրակրթական պետական չափորոշիչ» հասկացությունը:**

- Նորմատիվ փաստաթուղթ, որը, ըստ կրթական ծրագրի աստիճանների, սահմանում է սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը, սովորողների գնահատման համակարգի սկզբունքները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները և հանրակրթական միջնակարգ կրթության ծրագրի շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները (կոմպետենցիաները):

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 5*

*Հարց 76* **Ինչպե՞ս է սահմանվում «հանրակրթական ծրագիր (հիմնական և լրացուցիչ)» հասկացությունը:**

- Առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների և ուսուցման կազմակերպման ձևերի ամբողջություն, որոնք ապահովում են հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներն ու կարողունակությունները:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 6*

*Հարց 77* **Ինչպե՞ս է սահմանվում «հանրակրթական դպրոց» հասկացությունը:**

- Մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 8*

*Հարց 78* **Ո՞րն է տարրական կրթությունը:**

- Պարտադիր կրթության առաջին մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 2*

*Հարց 79 .* **Ո՞րն է հիմնական կրթությունը:**

- Պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ*

*Հարց 80* **Ո՞րն է միջնակարգ կրթությունը:**

- Հանրակրթության երրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 4*

*Հարց 81* **Ինչպես է ձևակերպվում հեռավար (դիստանցիոն) կրթությունը:**

- Կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.1)*

*Հարց 82* **Որն է կրեդիտային համակարգի ձևակերպումը:**

- Կրեդիտային համակարգը միջնակարգ կրթության ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ գնահատման, կրթական ծրագրերի յուրացման կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ է:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.2)*

*Հարց 83* **Այլընտրանքային ծրագիրը՝**

- հանրակրթական ծրագրից ուսումնական պլանով, ուսուցման կազմակերպման ձևով և առարկայական ծրագրերով տարբերվող, հանրակրթական պետական չափորոշչի վերջնարդյունքներն ու կարողունակություններն ապահովող և օրենսդրությամբ սահմանված կարգով որպես այլընտրանքային երաշխավորված հանրակրթական ծրագիր:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.3)*

*Հարց 84* **Թվարկվածներից որն է համարվում այլընտրանքային կրթական ծրագիր:**

- Միջազգային կրթական ծրագիրը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.3), գ*

*Հարց 85* **Որն է համարվում միջազգային կրթական ծրագիր:**

- Միջազգային պայմանագրի հիման վրա կամ տասը և ավելի օտարերկրյա պետություններում իրականացվող հանրակրթական ծրագիրը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 6.3), գ*

*Հարց 86* **Ռազմագիտության, սպորտի, արհեստների, արվեստի կամ գիտության որևէ բնագավառում հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:**

- Մասնագիտացված հանրակրթական դպրոց

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 9)*

*Հարց 87* **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, զարգացման ապահովման համար կրթական ծրագիր և աջակցություն իրականացնող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող կրթական ծառայություններ մատուցող ուսումնական հաստատության տեսակ.**

- Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10)*

*Հարց 88* **Ո՞րն է համարվում կրթության առանձնահատուկ պայմաններ:**

- անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական

տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջությունը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.1)*

*Հարց 89* **Ո՞վ է համարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ:**

- Բացառիկ ընդունակություններ ունեցող անձը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.2)*

*Հարց 90* **Ի՞նչ է ներառական կրթությունը:**

- Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.3)*

*Հարց 91* **Սովորողին, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին ցուցաբերվող ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցությունը համարվում է՝**

- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.4)*

*Հարց 92* **Ինչպե՞ս է անվանվում գործընթացը, որի ժամանակ կատարվում է երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում:**

- Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.5)*

*Հարց 93* **Ո՞ր կազմակերպությունն է գնահատում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:**

- մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.6*

*Հարց 94* **Ինչպե՞ս է կոչվում հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթը:**

- անհատական ուսուցման պլան:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.8)*

*Հարց 95* **կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատողը համարվում է**

- ուսուցչի օգնական

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 10.9)*

*Հարց 96* **Ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց.**

- ուսուցչի ատեստավորում

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 14)*

*Հարց 97* **Ինչպե՞ս է ձևակերպվում ուսուցչի մասնագիտական զարգացման և գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության նկարագիրը.**

- մասնագիտական չափանիշ

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1 , կետ 14.3)*

*Հարց 98 .* **Ինչպե՞ս է սահմանվում «հեռավար (դիստանցիոն) կրթություն» հասկացությունը:**

- Կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 6.1 կետ*

*Հարց 99* **Ինչպե՞ս է կազմակերպվում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը:**

- Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 10*

*Հարց 100* **Ո՞րն է հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը:**

- Կրթության զարգացման պետական ծրագիրը:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 4, մաս 7*

*Հարց 101* **Հանրակրթության բնագավառում պետությունը որ սկզբունքի ապահովումն է երաշխավորում:**

- անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 5, մաս 2, կետ 7*

*Հարց 102* **Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝**

- ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչները.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 1*

*Հարց 103* **Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝**

- ուսումնական պլանների ընդհանրական կառուցվածքը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 2*

*Հարց 104* **Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի**

- սովորողների գնահատման սկզբունքներն ու ձևերը.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 3*

*Հարց 105* **Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի**

- շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները (կոմպետենցիաները) և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 4*

*Հարց 106* **Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատում է՝**

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 3*

*Հարց 107* **Ի՞նչ է ներառում հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը**

- Ներառում է ուսումնական բնագավառները, դրանց հատկացվող ժամաքանակները, սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 4*

*Հարց 108* **Ուսումնական բնագավառներին հատկացվող պարտադիր նվազագույն ժամաքանակը ավագ դպրոցում ինչքա՞ն պետք է լինի:**

- Չի կարող լինել ընդհանուր նորմատիվային ժամաքանակի 30 տոկոսից պակաս:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 6, մաս 5*

*Հարց 109* **Ի՞նչ է ներառում պետական բաղադրիչը:**

- Պետական բաղադրիչը ներառում է պարտադիր առարկայացանկը և դրան հատկացվող ժամաքանակները:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 5, կետ 1*

*Հարց 110* **Ո՞ր մարմինն է հաստատում ուսումնական հաստատության սահմանած առարկաների ծրագրերը.**

- Ուսումնական հաստատության սահմանած առարկաների ծրագրերը սահմանված կարգով երաշխավորում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 5, 2-րդ ենթակետ*

*Հարց 111* **Ի՞նչ է սահմանում անհատական (ընտրովի) բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.**

- Անհատական (ընտրովի) բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմինը սահմանում է տվյալ դասարանում սովորողի ընտրությամբ հետազոտական աշխատանքներին, խմբակներին հատկացված նվազագույն ժամաքանակները՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով այլ հաստատությունների հետ:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 5, 3-րդ ենթակետ*

*Հարց 112* **Ի՞նչի հիման վրա է մշակում և հաստատում Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն իր ուսումնական պլանը.**

- Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքի հիման վրա մշակում և հաստատում է իր ուսումնական պլանը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 5*

*Հարց 113* **Ինչի՞ համար է նախատեսված դպրոցական բաղադրիչի ժամաքանակը:**

- դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական հաստատության սահմանած առարկաներին, ինչպես նաև կարող է հատկացվել պետական բաղադրիչով սահմանված առարկաներին:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 5, կետ 2*

*Հարց 114* **Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս կարող են իրականացնել միջազգային ծրագրեր:**

- Բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

*Հարց 115* **Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս չեն կարող իրականացնել միջազգային ծրագրեր՝**

- Լիազոր մարմնի որոշումով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

*Հարց 116* **Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս կարող են օտար լեզուներով կրթություն կազմակերպել:**

- Բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

*Հարց 117* **Ուսումնական հաստատությունները ինչպե՞ս չեն կարող օտար լեզուներով կրթություն կազմակերպել:**

- Բացառապես ՀՀ վարչապետի որոշումներով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

*Հարց 118* **Ո՞ր ուսումնական հաստատությունը կարող է օտար լեզվով կրթական ծրագիր իրականացնել:**

- Բացառապես ոչ պետական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ստեղծված ուսումնական հաստատությունները:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 6, կետ 6.1*

*Հարց 119* **Ի՞նչ սկզբունքով են կառուցվում հանրակրթական հիմնական ծրագրերը:**

- կառուցվում են հաջորդականության և շարունակականության սկզբունքով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 7*

*Հարց 120* **Քանի՞ տարի է միջնակարգ կրթության 2-րդ աստիճանի տևողությունը:**

•5 տարի

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7, մաս 8*

*Հարց 121* **Քանի՞ տարի է միջնակարգ կրթության տևողությունը:**

•12 տարի

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 7*

*Հարց 122* **Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը:**

•ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 5*

*Հարց 123* **Ի՞նչ է իրականացնում պետական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատության զարգացման ծրագրի կատարման մասով.**

- աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը.

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1, կետ 1, 1-ին ենթակետ*

*Հարց 124* **Ի՞նչ է իրականացնում պետական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատության զարգացման ծրագրի կատարման մասով.**

- լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն.

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1, 1-ին կետ,*

*Հարց 125* **Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամը պարտավոր է՝**

- ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել խորհրդի նիստերին, գործել բարեխղճորեն՝ ի նպաստ երեխայի շահերի և կրթության արդյունավետության.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 1, կետ 1)*

*Հարց 126* **Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամի լիազորությունները չեն դադարեցվում՝**

- մեկ տարվա ընթացքում խորհրդի առնվազն երկու նիստի չներկայանալու դեպքում:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 11, մաս 3,*

*Հարց 127* **Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն ի՞նչ փուլով է անցկացվում.**

- փաստաթղթերի համապատասխանության ճանաչում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած փաստաթղթերի ցանկի:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 1-ին ենթակետ*

*Հարց 128 .* **Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն ի՞նչ փուլով է անցկացվում.**

- մասնակցություն վերապատրաստումներին՝ դիմողի նախաձեռնությամբ.

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 2-րդ ենթակետ:*

*Հարց 129* **Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն ի՞նչ փուլով է անցկացվում.**

- քննություն՝ թեստավորման միջոցով:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 3-րդ ենթակետ:*

*Հարց 130* **Կարող է արդյոք ուսումնական հաստատությունը իրականացնել վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծրագրեր:**

- Այո՝ համաձայն իր կանոնադրության և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 14, մաս 4,*

*Հարց 131* **Ո՞վ է սահմանում պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը:**

- սահմանում է ուսումնական հաստատությունը:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 15, մաս 4,*

*Հարց 132* **Ո՞վ է սահմանում ոչ պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը:**

- հիմնադիրը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 15, մաս 4,*

*Հարց 133* **Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է:**

- տնօրենի հրամանով՝

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 1*

*Հարց 134* **Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է՝**

- տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետևանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 1.2)*

*Հարց 135* **Ի՞նչն է արգելված օրենքով՝ հանրակրթական դպրոցի առաջին դասարան երեխայի ընդունելության ժամանակ:**

- գիտելիքների ստուգումը՝

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 3*

*Հարց 136* **Ո՞ր երեխաներն են ընդունվում ուսումնական հաստատության առաջին դասարան:**

- Ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 2*

*Հարց 137* **Ինչպե՞ս է կազմակերպվում սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը:**

- Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 16, մաս 7*

*Հարց 138* **Երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են՝**

- երեք մակարդակում

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 1*

*Հարց 139* **Թվարկված մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից ո՞ր մակարդակն է տրամադրվում հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:**

- հանրապետական մակարդակը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 1, կետ 3*

*Հարց 140* **Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները՝**

- կազմում են համապատասխան եզրակացություն՝ երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 5, կետ 2*

*Հարց 141* **Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը՝**

- համակարգում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքները.

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 6, կետ 3*

*Հարց 142* **Ո՞վ է սահմանում Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների օրինակելի կանոնադրությունները**

- ՀՀ կառավարությունը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 17.1, մաս 7,*

*Հարց 143* **ի՞նչպիսի խրախուսման ձև կարող է սահմանել ուսումնական հաստատությունը սովորողների համար:**

- բարոյական և նյութական խրախուսման ձևեր

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 23,*

*Հարց 144* **Ո՞վ կարող է լինել ուսումնական հաստատության ուսուցիչ:**

- Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1*

*Հարց 145* **Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին ո՞վ կարող է դիմել.**

- տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով

իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 2, 1-ին ենթակետ*

*Հարց 146* **Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների համար առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին ո՞վ կարող է դիմել.**

- Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 2, 2-րդ ենթակետ*

*Հարց 147* **Ի՞նչ փոփոխությունների հիմք է հանդիսանում ուսուցչի կամավոր ատեստավորում:**

- Կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է ուսուցչի դրույքաչափի փոփոխության և հինգ տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 12*

*Հարց 148*. **Ի՞նչը կարող է հիմք հանդիսանալ ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:**

- Հերթական և կամավոր ատեստավորման հանձնաժողովների՝ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 13*

*Հարց 149* **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ի՞նչի հիման վրա է սահմանում ուսուցչի տարակարգերը.**

- Ուսուցչի տարակարգերը համապատասխանում են ուսուցչի մասնագիտական չափանիշներին, որոնք սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հիմք ընդունելով ուսուցչի գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների և ունակությունների ծավալը, ստեղծագործական-հետազոտական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, մանկավարժական գործունեության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարգևատրումը, համապատասխան մրցույթների մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները և այլն):

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 20*

*Հարց 150* **Պահպանվում են արդյո՞ք ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվող ուսուցչի տարակարգը և կամավոր ատեստավորման արդյունքով սահմանվող դրույքաչափը:**

- Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվող ուսուցչի տարակարգը և կամավոր ատեստավորման արդյունքով սահմանվող դրույքաչափը և հավելավճարը պահպանվում են:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 26*

*Հարց 151* **Ո՞ր մարմինն է հաստատում է լիազորված մարմնի՝ պետական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումը իրավաբանական անձին պատվիրակելու կարգը.**

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 6.1*

*Հարց 152* **Ո՞ր մարմինն է հաստատում հաստատում է պետական ուսումնական հաստատության համակարգողի նշանակման կարգը.**

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 6.2*

*Հարց 153* **Ո՞ր մարմինն է սահմանում հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման կարգը.**

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 12.1*

*Հարց 154* **Ո՞ր մարմինն է սահմանում ուսուցիչների կամավոր ատեստավորման կարգը.**

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 12.3*

*Հարց 155* **Ո՞ր մարմինն է հաստատում կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը.**

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 12.4*

*Հարց 156* **Ո՞ր մարմինն է սահմանում է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը.**

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 18.1*

*Հարց 157* **Ո՞ր մարմինն է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատության տնօրենին և համակարգողին և նրանց հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 6.1*

*Հարց 158* **Ո՞ր մարմինն է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնում տնօրենի և համակարգողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 6.1*

*Հարց 159* **Ո՞ր մարմինն է սահմանում միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.3*

*Հարց 160* **Ո՞ր մարմինն է սահմանում հանրակրթական ուսումնական հաստա-տություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.3*

*Հարց 161* **Ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը).**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.6*

*Հարց 162* **Ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը և հաստատում դրանց լրացման (գործածման) կարգերը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.7*

*Հարց 163* **Ո՞ր մարմինն է մշակում և հաստատում պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարո-ղական ցուցանիշներն ու պահանջները.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.8*

*Հարց 164* **Ո՞ր մարմինն է սահմանում հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման և վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.9*

*Հարց 165* **Ո՞ր մարմինն է սահմանում հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.14*

*Հարց 166* **Ո՞ր մարմինն է սահմանում ուսուցչի մասնագիտական չափանիշները.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.16*

*Հարց 167*. **Ո՞ր մարմինն է սահմանում պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների գնահատման չափանիշները.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.17*

*Հարց 168* **Ո՞ր մարմինն է սահմանում պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման կարգը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.18*

*Հարց 169* **Ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատության դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների երաշխավորման կարգը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.19*

*Հարց 170* **Ո՞ր մարմինն է սահմանում ատեստավորման ենթակա ուսուցչի կողմից հավաքվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափանիշները և նվազագույն չափաքանակը.**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 26.20*

*Հարց 171* **Հանրակրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություն չէ**

- դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 32, մաս 1, կետ 2*

*Հարց 172* **Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություն չէ:**

- համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացման աջակցմանը

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 32, մաս 1, կետ 1*

*Հարց 173* **Ովքե՞ր են մասնակցում ուսումնական հաստատության ներքին գնահատմանը**

- մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 34, մաս 2*

*Հարց 174* **Ու՞մ կողմից է կատարվում ուսումնական հաստատության արտաքին գնահատումը**

- անկախ կազմակերպության:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 34, մաս 5*

*Հարց 175* **Ինչպե՞ս է որոշվում շրջանավարտների համապատասխանության աստիճանը հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին:**

- կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կազմակերպած ամփոփիչ ատեստավորման արդյունքներով:

*«Հանրակրթության մասին» օրենք, հոդված 34, մաս 10*

*Հարց 176* **Պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար դիմող անձի հավաստագրումն քանի փուլով է անցկացվում.**

- մեկ:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, 4-րդ կետ, 3-րդ ենթակետ:*

***«Լեզվի մասին» ՀՀ օրենք***

*Հարց 177* **Ո՞րն է Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն:**

- գրական հայերենն է.

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված)*

*Հարց 178* **Ինչպե՞ս է բնորոշվում *«պետական լեզու»* հասկացությունը:**

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված և պետության հոգածությամբ ու հովանավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գերակայություն ունեցող լեզու:

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1.1-ին հոդված)*

*Հարց 179* **Ինչպե՞ս է բնորոշվում *«պաշտոնական լեզու»* հասկացությունը:**

- հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառույթներին և հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու.

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1.1-ին հոդված)*

*Հարց 180* **Ո՞րն է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն:**

- գրական հայերենն է.

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված)*

*Հարց 181* **Ինչպե՞ս է կազմակերպվում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը:**

- իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված)*

*Հարց 182* **Հայաստանի Հանրապետության տարածքում ո՞վ կարող է հիմնել օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն:**

- միայն Հայաստանի Հանրապետության Կառավարությունը.

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված)*

*Հարց 183* **Ո՞ր կրթական հաստատություններում են պարտադիր հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը:**

- Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում.

*(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված)*

*Հարց 184* **Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել՝**

- Միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*«Լեզվի մասին» օրենք հոդված 2, 3-րդ պարբ.*

*Հարց 185* **Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են՝**

- Գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

«Լեզվի մասին» օրենք հոդված 4 ա

*«Տեսչական մարմինների մասին» օրենք*

*Հարց 186* **Տեսչական մարմինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարում է՝**

- Օրենքով:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 5, մաս 2.*

*Հարց 187* **Նշվածներից ո՞ր մարմնին է հաշվետու տեսչական մարմնի ղեկավարը:**

- Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և Խորհրդին:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 8, մաս 2*

*Հարց 188* **Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատում է՝**

- Հայաստանի Հանրապետության վարչապետը:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 8, մաս 1*

*Հարց 189* **Նշվածներից ո՞րն է տեսչական մարմնի գործունեության սկզբունք:**

- Հաշվետվողականություն:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 4, մաս 1, կետ 3*

*Հարց 190* **Ի՞նչ կարող է ունենալ տեսչական մարմինը:**

- Կառուցվածքային ստորաբաժանումներ:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 5, մաս 3*

*Հարց 191* **Նշվածներից ո՞ր լիազորությունն է իրականացնում տեսչական մարմինը:**

- Համապատասխան ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 6, մաս 1, կետ 3*

*Հարց 192* **Տեսչական մարմինների և դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտը ո՞ր մարմիններին կարող է բողոքարկվել:**

- Ակտն ընդունած տեսչական մարմին կամ դատարան:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 9, մաս 1*

*Հարց 193* **Ի՞նչն է հանդիսանում տեսչական մարմինների աշխատանքի հիմք:**

- Մասնագիտական կարողությունները և դրանց շարունակական կատարելագործումը:

*«Տեսչական մարմինների մասին» օրենք, հոդված 10, մաս 2*

**_ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշում_**

**_ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին_**

*Հարց 194* **Տեսչական մարմինը՝**

- Ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

*N 729-Լ որոշում, կետ 2*

*Հարց 195* **Տեսչական մարմնի նպատակն է՝**

- Օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

*N 729-Ն որոշում, կետ 8*

*Հարց 196* **Տեսչական մարմնի խնդիրներն են՝**

- Նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

*N 729-Ն որոշում, կետ 9*

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք,*

*Հարց 197* **Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝**

- Հաղորդակցվելու իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 18, պարբ. 1*

*Հարց 198* **Ո՞վ է երեխայի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կրում:**

- Ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 14, պարբ. 2*

*Հարց 199* **Երեխայի հետ ո՞ր տարիքից կարելի է կնքել աշխատանքային պայմանագիր:**

- Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել 16 տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 19, պարբ. 2*

*Հարց 200* **Մինչև ո՞ր տարիքը լրանալն է արգելվում երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին:**

- 15 տարին:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 29, պարբ. 2*

*Հարց 201* **Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝**

- Պատվի և արժանապատվության:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 22, պարբ. 1*

*Հարց 202* **Ո՞ւմ հետ են համաձայնեցվում երեխայի հանգստի կազմակերպման համար նախատեսված նյութատեխնիկական բազայի կրճատմանն ուղղված գործողությունները:**

- Տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 20, պարբ. 3*

*Հարց 203* **Ծնողների (ծնողի) հետ համատեղ չբնակվող յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝**

- Իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված դեպքերի:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 15*

*Հարց 204* **Ո՞ր մարմիններն են մշակում և իրականացնում տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:**

- Պետական համապատասխան մարմինները:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 11, պարբ. 3*

*Հարց 205*. **Ո՞ր իրավական ակտով և ի՞նչ նպատակով կարող է սահմանափակվել երեխայի դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը:**

- Միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 10, պարբ. 4*

*Հարց 206* **Ո՞ւմ է արգելվում երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի:**

- Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին:

*«Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 9, պարբ.2*

*Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք*

*Հարց 207* **Ինչպե՞ս է սահմանվում «անհատական իրավական ակտ» հասկացությունը:**

- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 2, մաս 1, կետ 5

*Հարց 208* **Ինչպե՞ս է սահմանվում «ներքին իրավական ակտ» հասկացությունը:**

- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 2, մաս 1 , կետ 6*

*Հարց 209* **Ինչպե՞ս է սահմանվում «ներքին իրավական ակտ» հասկացությունը:**

- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 2, մաս 1 , կետ 6*

*Հարց 210* **Ո՞ր լեզվով են շարադրվում նորմատիվ իրավական ակտերը:**

- Նորմատիվ իրավական ակտերը շարադրվում են պետական լեզվով՝ հայերենով:

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 10, մաս 1*

*Հարց 211* **Նորմատիվ իրավական ակտերով սահմանվող ձևաթղթերը `**

- Կարող են շարադրվել օտար լեզվով կամ հայերենով՝ օտար լեզվի զուգորդմամբ:

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 10, մաս 3*

*Հարց 212* **Ինչպե՞ս են հաշվարկվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները:**

- Տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 31, մաս 1

*Հարց 213* **Ո՞վ է օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կրում իրավասու մարմինների տված պաշտոնական սխալ պարզաբանման հետևանքով պատճառված վնասի համար:**

- Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 44, մաս 2

*Հարց 214* **Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ ո՞ր մարմիններն են տալիս պաշտոնական պարզաբանում:**

- Պաշտոնական պարզաբանում տալիս են ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինները, բացառությամբ Ազգային ժողովի ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 42, մաս 4

## *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք*

*Հարց 215* **Ո՞ր դեպքում է պայմանագիրը համարվում կնքված:**

- Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 448, մաս 1*

*Հարց 216* **Ովքե՞ր են պատասխանատվություն կրում տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար:**

- Պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1067, մաս 1*

*Հարց 217* **Ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն իրենց պատճառած վնասի համար:**

- Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 1*

*Հարց 218* **Ովքե՞ր պետք է հատուցեն տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասի համար, եթե նա չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք:**

- Վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1068, մաս 2*

*Հարց 219* **Ի՞նչ է պարտավորվում վարձատուն վարձակալության պայմանագրով:**

- Վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 606*

*Հարց 220* **Նշվածներից ո՞րն է վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից:**

- Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 610, մաս 1*

*Հարց 221* **Նշվածներից ո՞րն է անշարժ գույքի վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից:**

- Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդված 610, մաս 2*

*Հարց 222* **Շենքի կամ շինության վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են՝**

- Պետական գրանցման:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 655*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի

*Հարց 223* **«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն պատվիրատու համարվում են՝**

- ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետության կամ համայնքների հիմնարկները:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 2 , մաս 1, կետ 1, ենթակետ ա.*

*Հարց 224* **Նշվածներից ո՞րն է համարվում գնում:**

- Պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը:

«Գնումների մասին» օրենք, հոդված 2, մաս 1 կետ 3

*Հարց 225* **«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նշվածներից ո՞ր մարմինն է համարվում լիազորված մարմին:**

- Պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող ՀՀ գործադիր իշխանության պետական մարմինը:

*«Գնումների մասին» օրենք հոդված 2 , մաս 1 , կետ 13*

*Հարց 226* **Ո՞րքան է գնումների բազային միավորը:**

- Մեկ միլիոն ՀՀ դրամ:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 2, կետ 21*

*Հարց 227* **Նշված գործարքներից ո՞ր տեսակի վրա չի տարածվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի գործողությունը:**

- Աշխատանքային պայմանագրերի:

*«Գնումների մասին» օրենք հոդված 3 , մաս 4, կետ 1*

*Հարց 228* **Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:**

- Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 6, մաս 3, կետ 1*

*Հարց 229* **Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:**

- Մասնագիտական փորձառությունը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 6, մաս 3, կետ 2*

*Հարց 230* **Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:**

- Տեխնիկական միջոցները:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 6, մաս 3, կետ 3*

*Հարց 231* **Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:**

- Ֆինանսական միջոցները:

*«Գնումների մասին» օրենքի հոդված 6, մաս 3, կետ 4*

*Հարց 232* **Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը:**

- Աշխատանքային ռեսուրսները:

*«Գնումների մասին» օրենք հոդված 6, մաս 3, կետ 5*

*Հարց 233* **Ի՞նչ փաստաթղթով է ձևավորվում գնահատող հանձնաժողովը:**

- Պատվիրատուի ղեկավարի հրամանով:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 26, մաս 1*

*Հարց 234* **Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝**

- Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 9, մաս 1, կետ 2*

*Հարց 235* **Պատվիրատուն ո՞ր մարմին է ներկայացնում գնումների տարեկան հաշվետվությունը:**

- Լիազորված մարմին:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 9, մաս 5*

*Հարց 236* **Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր:**

- Մրցակցության հավասար պայմանների ապահովում հնարավոր մասնակիցների համար:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 13, մաս 2, կետ 1*

*Հարց 237* **Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր:**

- Օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինելը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 13, մաս 2, կետ 3*

*Հարց 238* **Ո՞ր դեպքում գնման առարկայի հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը՝**

- Հղումներ օգտագործելու դեպքում:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 13, մաս 5*

*Հարց 239* **Նշվածներից ո՞վ է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):**

- Գնահատող հանձնաժողովը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 26 , մաս 1, կետ 5*

*Հարց 240* **Ո՞վ է հաստատում գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը:**

- ՀՀ կառավարությունը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 5, մաս 1, կետ 11*

*Հարց 241* **Շինարարական աշխատանքների գնման համար նշվածներից ո՞ր փաստաթղթերի հիման վրա են նախատեսվում ֆինանսական միջոցներ:**

- Սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի:

*«Գնումների մասին» օրենք հոդված 15, մաս 4*

*Հարց 242* **Նշվածներից ո՞վ ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:**

- Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

*«Գնումների մասին» օրենք հոդված 7, մաս 1*

*Հարց 243* **Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:**

- Էլեկտրոնային աճուրդը:

«Գնումների մասին» օրենք, հոդված 18, մաս 1, կետ 1

*Հարց 244* **Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:**

- Գնանշման հարցումը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված հոդված 18, մաս 1, կետ 3*

*Հարց 245* **Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ:**

- Մեկ անձից գնումը:

*«Գնումների մասին» օրենք, հոդված 18, մաս 1, կետ 4*

*Հարց 246* **Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր՝**

- Սեզոնային աշխատանքներ կատարողների հետ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 3*

*Հարց 247* **Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր:**

- Ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 5*

*Հարց 248* **Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր:**

- Օտարերկրացիների հետ՝ կացության իրավունքի վավերականության ժամկետով, եթե ՀՀ-ում աաշխատելու համար օտարերկրացուց պահանջվում է ունենալ կացության կարգավիճակ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 95, մաս 3, կետ 6*

*Հարց 249* **Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝**

- աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան

վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը).»,

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք»,հոդված 113, մաս 1, կետ 7*

*Հարց 250* **Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝**

- Աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքը:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք»,հոդված 113, մաս 1, կետ 3*

*Հարց 251* **Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:**

- Աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքը:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 5*

*Հարց 252* **Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:**

- Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք»,հոդված 113 , մաս 1, կետ 6*

*Հարց 253* **Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:**

- Անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք»,հոդված 113, մաս 1, կետ 9*

*Հարց 254* **Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք:**

- Պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,հոդված 113, մաս 1, կետ 10*

*Հարց 255* **Ե՞րբ կարող է կարգապահական տույժ կիրառվել, եթե աշխատողը գրավոր բացատրության չի ներկայացրել:**

- Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» հոդված 226, մաս 1*

*Հարց 256* **Եթե աշխատողը աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ համաձայն չէ, ապա ի՞նչ ժամկետում կարող է դիմել դատարան:**

- Համապատասխան անհատական իրավական ակտն ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 265, մաս 1*

*Հարց 257* **Ի՞նչ ակտով են սահմանվում ժամային, օրական, գործավարձային և ամսական դրույքաչափերը, աշխատանքի վարձատրության չափն ու պայմանները, աշխատանքի նորմաները:**

- Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 180, մաս 2*

*Հարց 258* **Նշվածներից ո՞րն է գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝**

- Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 113, մաս 1, կետ 4*

*Հարց 259* **Որքա՞ն է 16-ից մինչև 18 տարեկան աշխատողների աշխատաժամանակի կրճատ տևողությունը:**

- Շաբաթական մինչև 36 ժամ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 140, մաս 1, կետ 5*

*Հարց 260* **Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը:**

- Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 159, մաս 1*

*Հարց 261* **Որքա՞ն է ամենամյա երկարացված արձակուրդի տևողությունը բացառիկ դեպքերում:**

- Բացառիկ դեպքերում՝ 35 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում և 42 աշխատանքային օր՝ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 160*

*Հարց 262* **Ո՞ր դեպքում է թույլատրվում ամենամյա արձակուրդից հետ կանչելը՝**

- Ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 166 կետ մաս 1*

*Հարց 263* **Ե՞րբ է իրականացվում ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումը:**

- Ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց 3 օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդն սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 169, մաս 2*

*Հարց 264* **Քանի՞ օրվա ընթացքում է գործատուն պարտավոր աշխատողին հանձնել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը:**

- Անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

*ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 5, մաս 4*

*Հարց 265* **Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ:**

- Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 171, կետ 2*

*Հարց 266* **Չվճարվող արձակուրդը ի՞նչ կարգով է տրամադրվում հաշմանդամություն ունեցող աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին:**

- Բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 30 աշխատանքային օր տարվա ընթացքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 176, մաս 1, կետ 2*

*Հարց 267 .* **Ի՞նչ պարբերականությամբ և ժամկետներում է հաշվարկվում ու վճարվում աշխատավարձը:**

- Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 192, մաս 1*

*Հարց 268* **Քանի՞ օր առաջ և ի՞նչ կարգով է գործատուն պարտավոր նախազգուշացնել փորձաշրջանը չանցած աշխատողին՝ աշխատանքից ազատվելու մասին:**

- Գործատուն կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 93, մաս 1*

*Հարց 269* **Ո՞ր աշխատանքն է համարվում համատեղությամբ կատարվող աշխատանք:**

- Հիմնական աշխատանքից ազատ ժամանակ, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 99, մաս 1*

*Հարց 270* **Ո՞ր օրն է աշխատողը պարտավոր աշխատանքի անցնել:**

- Աշխատանքային պայմանագրում նշված օրը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 85, մաս 3*

*Հարց 271* **Նշված հիմքերից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:**

- Կողմերի համաձայնությամբ:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, 1 կետ*

*Հարց 272* **Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:**

- Աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 2*

*Հարց 273* **Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:**

- Աշխատողի նախաձեռնությամբ:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 3*

*Հարց 274* **Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:**

- Գործատուի նախաձեռնությամբ:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 4*

*Հարց 275* **Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:**

- Աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչելու դեպքում:

*«ՀՀ Աշխապրանքային օրենսգիրք», հոդված 109, մաս 1, կետ 5*

*Հարց 276* **Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:**

- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» ,հոդված 109, մաս 1, կետ 6*

*Հարց 277* **Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին քանի՞ օրով կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ աշխատանքային տարվա ընթացքում:**

- Ոչ ավելի, քան 60 օր:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 176 , մաս 3*

*Հարց 278* **Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ:**

- Չվճարվող արձակուրդը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 171, կետ 5*

*Հարց 279* **Ո՞ր դեպքում կարգապահական տույժը կարող է հանվել:**

- Եթե մինչև մեկ տարին լրանալը, աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 230*

*Հարց 280* **Ո՞ր դեպքերում ամենամյա արձակուրդից հետ կանչելիս աշխատողի համաձայնությունը չի պահանջվում:**

- Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» հոդված 166, մաս 2*

*Հարց 281* **Որքա՞ն է աշխատաժամանակի շաբաթական առավելագույն տևողությունը:**

- Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 139, մաս 1*

*Հարց 282* **Ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին աշխատանքային առաջին տարում ամենամյա արձակուրդը ե՞րբ է տրամադրվում:**

- Ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին ամենամյա արձակուրդը տրամադրվում է սովորողների ամառային արձակուրդի ժամանակ, այդ թվում՝ աշխատանքային առաջին տարում, անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ աշխատողներն սկսել իրենց աշխատանքը

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 164, մաս 6*

*Հարց 283* **Որքա՞ն է աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը:**

- Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդված 139, մաս 3*

***Հաշվապահական հաշվառման մասին» օրենք***

*Հարց 284* **Հաշվապահական հաշվառման կարգավորման գործում ինչի՞ համար է պատասխանատու կազմակերպության ղեկավարությունը:**

- Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու և ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար:

*«Հաշվապահական հաշվառման մասին» օրենք, հոդված 8, մաս 1*

*Հարց 285* **Ինչի՞ համար է պատասխանատու հաստատության գլխավոր հաշվապահը:**

- Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու համար:

*«Հաշվապահական հաշվառման մասին» օրենք, հոդված 9, մաս 2*

***«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք***

*Հարց 286* **«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենքի համաձայն՝ ո՞վ է պատասխանատվություն կրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու համար:**

- Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

*«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 16 մաս 3*

*Հարց 287* **«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ո՞րն է համարվում Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր:**

- Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր է համարվում դրանց՝ ըստ պատկանելության հանձնելու օրը:

*«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 20, մաս 3*

*Հարց 288* **«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ե՞րբ է կազմակերպությունը պարտադիր անցկացնում ակտիվների և պարտավորությունների գույքագրում:**

- Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելուց առաջ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև կազմակերպության վերակազմակերպման և (կամ) լուծարման դեպքերում կազմակերպությունը պարտադիր անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

*«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման» մասին օրենք, հոդված 14, մաս 1*

## *«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրք*

*Հարց 289* **Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:**

- Իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*օրենսգիրք հոդված 33, կետ 2*

*Հարց 290* **Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:**

- Իրավախախտում կատարելը անչափահասի կողմից:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*օրենսգիրք, հոդված 33, կետ 4*

*Հարց 291* **Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:**

- Մեկ տարվա ընթացքում կրկին նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*ՀՀ օրենսգիրք, հոդված 34, կետ 2*

*Հարց 292* **Ո՞ր ժամկետում և դեպքում է անձը համարվում վարչական տույժի չենթարկված:**

- Եթե վարչական տույժի ենթարկված անձը տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարել:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
ՀՀ օրենսգիրք, հոդված 38

*Հարց 293* **18 տարին լրացած անձի կողմից երեխային ոչ սթափ վիճակի հասցնելը՝**

- Առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քանապատիկի չափով:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*ՀՀ օրենսգիրք, հոդված 177*

***«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին***
***օրենք***

*Հարց 294* **Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ:**

- Միայն հիմնադրի:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 3, մաս 5*

*Հարց 295* **Ինչի՞ իրավունք ունի պետական կազմակերպությունը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի նկատմամբ:**

- Օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 4, մաս 2*

*Հարց 296* **Պետական կազմակերպությունն իրեն ամրացված գույքը ո՞ր դեպքում կարող է պետության անունից հանձնել վարձակալության:**

- Եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված, 5, մաս 3*

*Հարց 297* **Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են՝**

- Հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 8, մաս 1*

*Հարց 298* **Նշվածներից ո՞ր մարմինը կարող է հանդիսանալ պետական կազմակերպությն հիմնադիր:**

- Միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Կառավարության:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 9, մաս 2*

*Հարց 299* **Լիազորված պետական մարմինը՝**

- Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 14, մաս 2, ենթակետ գ*

*Հարց 300* **Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ՝**

- Եթե լրացել է նրա 65 տարին:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 16, մաս 3, ենթակետ բ*

*Հարց 301* **Նշվածներից ո՞ր մարմինը իրավունք ունի հետ վերցնելու պետական կազմակերպությանն ամրացված գույքը:**

- Հիմնադիրը:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 5, մաս 2*

*Հարց 302* **Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝**

- Նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը:

ՊՈԱԿ-ի *մասին օրենք, հոդված 16, մաս 3, ենթակետ է*

*Հարց 303* **Ի՞նչ պետք է ներառի պետական կազմակերպության կանոնադրությունը**

- պետական կազմակերպության գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

ՊՈԱԿ-ի մասին օրենք, 11-րդ հոդված, կետ գ

*Հարց 304* **Ի՞նչ պետք է ներառի պետական կազմակերպության կանոնադրությունը**

- պետական կազմակերպության կառավարման մարմինները, դրանց կազմը և լիազորությունները.

ՊՈԱԿ-ի մասին օրենք, 11-րդ հոդված, կետ դ

*Հարց 305* **Ի՞նչ պետք է ներառի պետական կազմակերպության կանոնադրությունը**

- պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը.

ՊՈԱԿ-ի մասին օրենք, 11-րդ հոդված, կետ զ

***Տարվա լավագույնները մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կարգ***

*Հարց 306* **Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագրային առաջարկը կարող է ուղղված լինել՝**

- գնահատման այլընտրանքային ձևերի ներդրմանն ու կիրառմանը:

*«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կար գ, կետ 14, 1-ին ենթակետ*

*Հարց 307* **Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագրային առաջարկը կարող է ուղղված լինել՝**

- դասավանդման այլընտրանքային, նոր մեթոդների ներդրմանն ու կիրառմանը:

*«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կարգ, կետ 14, 1-ին ենթակետ*

*Հարց 308* **Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագիրը կարող է ուղղված լինել՝**

- առարկայական հեղինակային ծրագրերի մշակմանն ու կիրառությանը դպրոցական բաղադրիչի շրջանակներում:

*«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կարգ, կետ 14, 1-ին ենթակետ*

*Հարց 309* **Ոչ ամբողջական ծրագրային առաջարկների պարագայում, քանի՞ օր է տրվում բացակայող փաստաթղթերի ներկայացման համար:**

- մինչև երեք աշխատանքային օր:

«Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կարգ, կետ 17

***16.02.2023թ. N216-Ն որոշման Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիր***

*Հարց 310* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Մշակում և Հաստատության կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) հաստատմանն է ներկայացնում Հաստատության զարգացման ծրագիրը, դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը, խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հաստատության արտաքին և ներքին գնահատման արդյունքները:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 2*

*Հարց 311* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Պլանավորում է Հաստատության աշխատանքը՝ մշակում է Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և ներդպրոցական վերահսկողության պլանը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 4*

*Հարց 312* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Ապահովում է Հաստատության զարգացման ծրագրի, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան աշխատանքային պլանի, ներդպրոցական վերահսկողության պլանի, կրթական ծրագրերի, ուսումնական առարկաների ծրագրերի, թեմատիկ պլանների, Հաստատության կանոնադրության պահանջների կատարումը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 7*

*Հարց 313* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Պաշտոնների անվանացանկի և պաշտոնների նկարագրի համաձայն անցկացված մրցույթի արդյունքում աշխատանքի է նշանակում ուսուցիչների, ընտրում և նշանակում է մանկավարժական կադրերին, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետին և գործավարին (օգնական), իր տեղակալներին, մասնաճյուղի, մեթոդական միավորումների ղեկավարներին, նրանց հետ կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր, կատարում աշխատանքի բաշխում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 9*

*Հարց 314* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Իրականացնում է հսկողություն առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների համակարգման նկատմամբ, ղեկավարում է մանկավարժական խորհրդի աշխատանքները և աջակցում է Հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքներին:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 17*

*Հարց 315* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ համապատասխան իրավական ակտով հաստատում է Հաստատության ուսումնական պլանը, դասաբաշխումը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, ներդպրոցական վերահսկողության պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, ինչպես նաև տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների մանկավարժական աշխատողների կիսամյակային, տարեկան հաշվետվությունները և աշխատանքային տարեկան պլանները:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 18*

*Հարց 316* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Կազմակերպում է Հաստատության էջի վարումը դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ԴԿՏՀ):

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 21*

*Հարց 317* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Կառավարում է Հաստատության սովորողների համակազմը՝ լիցենզիայով սահմանված չափով, բացառությամբ բոլոր այն բնակավայրերի Հաստատության, որը տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական Հաստատությունն է:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 32*

*Հարց 318* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Մշտադիտարկում է Հաստատության սովորողների հետ անցկացվող ցանկացած պարապմունք:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 40*

*Հարց 319* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է.**

- Պատասխանատու է Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, էլեկտրոնային մատյանի լրացման աշխատանքների, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության ապահովման համար:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 1*

*Հարց 320* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է.**

- Իրականացնում է ուսումնական պարապմունքների իրականացման նկատմամբ հսկողություն և մշտադիտարկում՝ համաձայն Հաստատության ներդպրոցական վերահսկողության պլանի: Ներկայացնում է առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 3*

*Հարց 321* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է.**

- Վերահսկում և ապահովում է համակցված/հեռավար ուսուցման կազմակերպման բովանդակային գործընթացը ուսուցման կազմակերպման համակարգում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 5*

*Հարց 322* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է.**

- Իրականացնում է Հաստատության մանկավարժական աշխատողների (այդ թվում՝ սկսնակ) մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստումների ընթացքի, արդյունքների, սովորողների առաջադիմության վրա դրանց ազդեցության նկատմամբ հսկողություն և ներկայացնում է հաշվետվություն մանկավարժական խորհրդին:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 7*

*Հարց 323* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է.**

- Կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 8*

*Հարց 324* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է.**

- Ապահովում է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը և անհատական ուսուցման պլանի (այսուհետ՝ ԱՈՒՊ) մշակումը և պահպանումը սովորողի անձնական գործում, վերահսկում է իրականացման և գնահատման գործընթացը:
- 

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 12*

*Հարց 325* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալի աշխատանքային գործառույթներից է.**

- Ղեկավարում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող խմբի աշխատանքները:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 2-րդ բաժին, կետ 1, ենթակետ 13*

*Հարց 326* **Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է.**

- Աջակցում է մասնագիտական կողմնորոշման միջոցառումների իրականացմանը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 3*

*Հարց 327* **Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է.**

- Աջակցություն է տրամադրում սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

*Հարց 328* **Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է.**

- Կանոնակարգում և վերահսկում է երկարօրյա ուսուցման կազմակերպական աշխատանքները, ապահովում է սովորողների կյանքի և առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմանները, կազմում երկարօրյա խմբի (խմբերի) աշխատանքի կարգացուցակը և աշխատանքի տարեկան պլանը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 7*

*Հարց 329* **Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է.**

- Կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, այդ թվում՝ խմբակների, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 8*

*Հարց 330* **Հանրակրթական ուսումնական հաստատության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի աշխատանքային գործառույթներից է.**

- Աշխատանք է տանում սովորողների բարեվարքության կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հանրային վերահսկողությանը. հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, նպաստում նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, դաստիարակում մարդասիրություն և հայրենասիրություն:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 3-րդ բաժին, կետ 1, ենթակետ 12*

*Հարց 331* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է.**

- Իրականացնում է դասավանդած առարկայի թեմատիկ պլանավորում այն դասարանների համար, որտեղ իրականացնելու է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխման:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 1*

*Հարց 332* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է.**

- Իրականացնում է դասավանդած առարկայի բոլոր դասերի պլանավորումը (գրավոր) այն դասարանների համար, որտեղ իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխման և իր կողմից մշակված թեմատիկ պլանի:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որշում» որոշում», 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 2*

*Հարց 333* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է.**

- Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնում է համակցված/հեռավար ուսուցում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 5*

*Հարց 334* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է.**

- Միավորային և ձևավորող գնահատման միջոցով իրականացնում է սովորողների առաջադիմության մշտադիտարկում և գնահատում, առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում և ըստ անհրաժեշտության աջակցության տրամադրում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 7*

*Հարց 335* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներից է.**

- Մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան կրթության կազմակերպմանը՝ ըստ կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՈՒՊ-ի:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 4-րդ բաժին, կետ 1, ենթակետ 10*

*Հարց 336* **Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային գործառույթներից է.**

- Ուսումնասիրում է սովորողի ցածր առաջադիմության, կարգապահական խախտումների, ինչպես նաև սոցիալապես ակտիվ անձի ձևավորմանը խոչընդոտող, միջանձնային հարաբերություններում առաջացած խնդիրների հոգեբանական պատճառները և կազմակերպում համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 5-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

*Հարց 337* **Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային գործառույթներից է.**

- Մասնագիտական կողմնորոշման նպատակով, որպես մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամ, բացահայտում է սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածքը, կարողությունները, ընդունակությունները, նախասիրությունները, հակումները, հետաքրքրությունները, պահանջմունքները, դրդապատճառները՝ կիրառելով հոգեբանամանկավարժական ախտորոշող մեթոդներ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 5-րդ բաժին, կետ 1, ենթակետ 13*

*Հարց 338* **Հանրակրթական ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկ) աշխատանքային գործառույթներից է.**

- Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ միասին կազմակերպում է ներդպրոցական ռազմամարզական և քաղպաշտպանության միջոցառումներ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 8-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

*Հարց 339* **Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի աշխատանքային գործառույթներից է.**

- Աջակցում է սովորողների և մանկավարժական աշխատողների ինքնակրթության կազմակերպմանը, մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացմանը՝ տարբեր կրիչների վրա պարունակվող (գրքային ֆոնդ, էլեկտրոնային կրիչներ) տեղեկատվության տրամադրման միջոցով:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 9-րդ բաժին, կետ 1, ենթակետ 2*

*Հարց 340* **Հանրակրթական ուսումնական հաստատության լաբորանտի աշխատանքային գործառույթներից է.**

- Ուսուցիչների հետ միասին բացահայտում, դիտարկում, հետազոտում է սովորողների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 10-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 3*

*Հարց 341* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի աշխատանքային գործառույթներից է.**

- Ըստ Հաստատության տնօրենության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնում է սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 11-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 8*

*Հարց 342* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի աշխատանքային գործառույթներից է.**

- Մասնակցում է Հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին՝ ուսուցիչներին դասի գործընթացում առավել արդյունավետ աջակցություն տրամադրելու նպատակով:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 11-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 16*

*Հարց 343* **Հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի աշխատանքային գործառույթներից է.**

- Ուսուցչի մշակած առցանց բովանդակության շարունակական մշտադիտարկում, տրամադրում է աջակցություն էլեկտրոնային կրթական ռեսուրսների բարելավման ուղղությամբ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 12-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 16*

*Հարց 344* **Հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի աշխատանքային գործառույթներից է.**

- Առցանց դասերի դասալսումներ և հետադարձ կապի տրամադրում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում»,  12-րդ  բաժին, կետ 1, ենթակետ 17*

*Հարց 345* **Հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի աշխատանքային գործառույթներից է.**

- Ապահովում է ուսուցման կազմակերպման համակարգում ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների համապատասխանությունը էլեկտրոնային ուսուցման սկզբունքներին և չափորոշչային պահանջներին:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 12-րդ բաժին, կետ 1, ենթակետ 22*

*Հարց 346* **Հանրակրթական ուսումնական հաստատության խմբակավարի աշխատանքային գործառույթներից է.**

- Հաստատության կրթական աջակցությունների համակարգողին է ներկայացնում ամսական, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ խմբակի իրականացրած աշխատանքների վերաբերյալ՝ ապահովելով խմբակի փաստաթղթաշրջանառության և հաշվետվողականության պահանջները:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 13-րդ բաժին, կետ 1, ենթակետ 5*

*Հարց 347* **Հանրակրթական ուսումնական հաստատության խմբակավարի աշխատանքային գործառույթներից է.**

- Պատասխանատու է խմբակի ծրագրի իրականացման համար:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 13-րդ բաժին, կետ 1, ենթակետ 6*

*Հարց 348* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Ապահովում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի բաժինների լրացման/խմբագրման ժամկետների պահպանումը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը սահմանելու և կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրը ներդնելու մասին» N 65-Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 22*

*Հարց 349* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի աշխատանքային գործառույթներից է.**

- Ապահովում է ուսուցման կազմակերպման համակարգում (այսուհետ՝ ՈՒԿՀ) գործարկումը և համակցված/հեռավար ուսուցման կազմակերպումը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 1-ին բաժին, կետ 1, ենթակետ 24*

*Հարց 350* **«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ:**

- Հաստատության տնօրենի տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա կրթության ոլորտի բարձրագույն կրթություն և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 2, կետ 3*

*Հարց 351* **«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ կարող է աշխատել կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող:**

- Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 3, կետ 3*

*Հարց 352* **Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավար:**

- Հաստատության գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կամ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում գրադարանային կամ մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 9, կետ 3*

*Հարց 353* **Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկ:**

- Հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն, սպայական կոչում:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 8, կետ 3*

*Հարց 354* **Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության լաբորանտ:**

- Հաստատության լաբորանտը պետք է ունենա բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 10, կետ 3*

*Հարց 355* **Ո՞վ կարող է զբաղեցնել հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի պաշտոնը:**

- Հաստատության էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կամ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն և իր պաշտոնի նկարագրին համապատասխան՝ տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների կիրառմանը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», 16.02.2023թ. բաժնի, գլուխ 12, կետ 3*

*Հարց 356* **Խմբակավարը ո՞ւմ է ներկայացնում ամսական, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ խմբակի իրականացրած աշխատանքների վերաբերյալ՝ ապահովելով խմբակի փաստաթղթաշրջանառության և հաշվետվողականության պահանջները.**

- Հաստատության կրթական աջակցությունների համակարգողին:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժնի, գլուխ 13, կետ 1, ենթակետ 5*

*Հարց 357* **Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության խմբակավար:**

- Հաստատության խմբակավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում (առողջ ապրելակերպի խմբակավարը կարող է ունենալ նաև հոգեբանի որակավորում) կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժնի, գլուխ 13, կետ 3*

*Հարց 358* **Կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ կարող է զբաղեցնել հանրակրթական ուսումնական հաստատության համակարգողի պաշտոնը:**

- Հաստատության համակարգողի պաշտոնը կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին 7 տարվա ընթացքում քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 1, կետ 3*

*Հարց 359* **Կառավարման նոր համակարգի անցած դպրոցում ո՞վ է հաստատում կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորված տարիֆիկացիան:**

- Հանրակրթական ուսումնական հաստատության համակարգողը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում», բաժին, գլուխ 1, կետ 1, ենթակետ 4*

*Հարց 360* **Ո՞վ է կազմում և լիազոր մարմին ներկայացնում հանրակրթական ուսումնական հաստատության նախահաշիվը:**

- Հանրակրթական ուսումնական հաստատության համակարգողը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում»,* բաժին, *գլուխ 1, կետ 1, ենթակետ 6*

*Հարց 361* **Ո՞վ է աշխատանքներ տանում հաստիքային ֆինանսական և դրամարկղային կարգապահության, վարչատնտեսական և այլ ծախսերի նախահաշիվների, հաշվապահական հաշվառման հաշիվներից պակասորդների, այլ գործառույթների օրինականության խստիվ պահպանումն ապահովելու ուղղությամբ, միջոցներ ձեռնարկում հաշվապահական փաստաթղթերը պահպանելու համար, սահմանված կարգով դրանք արխիվացնում:**

- Հանրակրթական ուսումնական հաստատության հաշվապահը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում»,* բաժին, *գլուխ 2, կետ 1, ենթակետ 9*

*Հարց 362* **Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության հաշվապահ:**

- Հաստատության հաշվապահի պաշտոնը կարող է զբաղեցնել հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող կամ վերջին հինգ տարվա ընթացքում հաշվապահի՝ առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ ունեցող անձը:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում»,* բաժին, *գլուխ 2, կետ 3*

*Հարց 363* **Ո՞վ կարող է աշխատել հանրակրթական ուսումնական հաստատության խոհարար:**

- Խոհարարի պաշտոնին նշանակվող անձը պետք է ունենա առնվազն միջնակարգ, կամ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն, կամ խոհարարի աշխատանքի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:

*«ՀՀ կառավարության 2023 թ. N 216-Ն որոշում»*, բաժին, *գլուխ 5, կետ 3*

**ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՒՇ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՈՎՈՐՈՂԻՆ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏԵԼՈՒ**

2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն

*Հարց 364*. **Սովորողին դպրոց ընդունելու հրամանին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, դպրոց ընդունված երեխայի տվյալները դպրոցի տնօրենը մուտքագրում է**

- ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԿՏԱԿ -ի կողմից վարվող «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»:

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 4

*Հարց 365* **Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կարող է կատարվել՝**

- սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում /դասարանում/

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 5

*Հարց 366* **Օտարերկրյա քաղաքացիների երեխաների ուսուցման լեզուն**

- ծնողներն ընտրում են ինքնուրույն:

ՀՀ կրթության և գիտության նախարարի<br>2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 7

*Հարց 367* **Ոչ պետական դպրոցից սովորողի ազատումը կարող է կատարվել**

- ծնողի և տվյալ դպրոցի միջև կնքված պայմանագրի դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում:

ՀՀ կրթության և գիտության նախարարի<br>2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 28

*Հարց 368* **Մասնագիտացված դպրոցից սովորողի ազատումը կարող է կատարվել**

- ծնողի և տվյալ դպրոցի միջև կնքված պայմանագրի դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում:

ՀՀ կրթության և գիտության նախարարի<br>2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 28

*Հարց 369* **Ո՞ր դասարանում է կազմակերպվում մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 8 տարին լրացած դպրոց չհաճախած երեխայի կրթությունը**

- 1-ին դասարան՝ ընդհանուր հիմունքներով,

ՀՀ կրթության և գիտության նախարարի<br>2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 29

*Հարց 370* **Ինչպե՞ս է կազմակերպվում մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 9-ից մինչև 15 տարին լրանալու դեպքում կամ մինչև մեկ տարի ուսումն ընդհատած սովորողի կրթությունը՝**

- իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր՝ գիտելիքների գրավոր ստուգման արդյունքում,

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 29

*Հարց 371* **Ինչպե՞ս է կազմակերպվում 19 տարին չլրացած կրթական 3-րդ աստիճանի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ դասարաններում ուսումն ընդհատած լինելու դեպքում սովորողի կրթությունը՝**

- ուսումնառությունը շարունակում է ընդհատած ժամանակահատվածից:

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 29

*Հարց 372* **Ինչպե՞ս է իրականացվում սովորողի ընդունելությունը այն բնակավայրերում, որտեղ հաստատությունը տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական հաստատությունն է:**

- Բոլոր այն բնակավայրերում, որտեղ հաստատությունը տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական հաստատությունն է կամ տվյալ համայնքում գործող պետական հաստատություններում տվյալ կրթական աստիճանի համար լիցենզիայով տրված բոլոր տեղերը զբաղված են, սովորողի ընդունելությունը հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից:

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ 8

*Հարց 373* **Ո՞վ ունի առաջնահերթություն՝ դպրոց ընդունվելիս:**

- Տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետևանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին.

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ **12, ենթակետ 3**

*Հարց 374* **Ինչպե՞ս է իրականացվում երկյակ, եռյակ, քառյակ և ավելի երեխաների հայտագրումը նույն հաստատությունում:**

- Երկյակ, եռյակ, քառյակ և ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը հաստատություն ապահովում է մյուս երեխայի (երեխաների) ընդունելությունը նույն հաստատությունում՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից:

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ **15**

*Հարց 375* **Ինչպե՞ս են հայտագրում իրենց երեխաներին առաջնահերթության իրավունք ունեցող և այդ իրավունքից չօգտված քաղաքացիները:**

- ընդհանուր հիմունքներով

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրաման, կետ **17**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20 հունվարի 2021 թ. N 17-Ն հրաման**

*Հարց 376* **Ո՞ր մարմինն է ընդունում պետական ուսումնական հաստատության անվանակոչման մասին որոշումները,**

- ընդունում է ուսումնական հաստատության լիազոր մարմինը ըստ ենթակայության:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 1

*Հարց 377* **Ի՞նչ տեղեկատվություն պետք է պարունակի հաստատության անվանակոչման մասին առաջարկությունը**

- ուսումնական հաստատության (կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, մանկավարժական և ծնողական խորհուրդների) համաձայնությունը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 3

*Հարց 378* **Ուսումնական հաստատությունները կարող են անվանակոչվել.**

- ուսումնական հաստատության շրջանավարտների անունով՝ ուսումնական հաստատության միջազգայնացման և վարկանիշը բարձրացնելու գործում ունեցած ավանդի, հայրենիքին մատուցած ծառայությունների համար

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 12

*Հարց 379* **Ո՞ր դեպքում չի կարող իրականացվել անվանակոչություն**

- հանրային շահերի համար ռիսկեր ստեղծող գործունեություն իրականացրած կամ դրա մեջ ընդգրկված ֆիզիկական անձանց անվամբ կամ կազմակերպությունների անվանումով չի կարող

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 14

*Հարց 380* **Ո՞ր դեպքում չի կարող իրականացվել անվանակոչություն**

- հանցագործությունների համար դատապարտված անձանց անվամբ, եթե դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման, կետ 14

*Հարց 381* **Ե՞րբ կարող է փոխվել անվանակոչված ուսումնական հաստատության անվանումը:**

- առնվազն 20 տարի հետո՝ համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20.01. 2021 թ.N 17-Ն հրաման կետ 18

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի N 09-Ն հրաման,

*Հարց 382* **Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝**

- եթե գյուղական բնակավայրում գտնվող հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ՝ մինչև սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8

*Հարց 383* **Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝**

- արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն),

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8

*Հարց 384* **Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝**

- դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) երեխաների համար՝ առավելագույնը 1 կիսամյակ, կամ օտարերկրյա պետություններում ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար՝ առավելագույնը 20 օր, եթե կրթության իրավունքը չի իրացվել տվյալ երկրում,

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8

*Հարց 385* **Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝**

- այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատև բուժման կարիք,

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 8

*Հարց 386* **Ո՞վ է պատասխանատու հեռավար ուսուցման համար այն հաստատությունում, որտեղ չկա տվյալ առարկայի մասնագետ և դասերն անցկացվում են հեռավար եղանակով.**

- Այն ուսումնական հաստատություններում, որտեղ չկա տվյալ առարկայի մասնագետ և դասերն իրականացվում են հեռավար, տնօրենի հրամանով՝ տվյալ հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը նշանակվում է ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման պատասխանատու:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 19

*Հարց 387* **Ի՞նչ նյութեր կարող է օգտագործել հաստատությունը՝ հեռավար ուսուցման համար:**

- Ուսումնական հաստատությունը, հեռավար կրթությամբ ուսումնական գործընթաց կազմակերպելու համար կարող է օգտագործել ինչպես հեռավար ուսուցման համալիր էջում տեղակայված ուսումնամեթոդական նյութերը, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ մշակել նոր ուսումնամեթոդական նյութեր՝ առարկայի ծրագրին, ուսումնական պլանին և պետական չափորոշչին համապատասխան:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ.մայիսի 20-ի N 09-Ն հրաման, կետ 23

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ**
**ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման**

*Հարց 388* **Ո՞ր մարմինն է հայտարարում պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:**

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կամ մարզպետարանի կամ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ լիազոր մարմին) համապատասխան ստորաբաժանումը՝ ըստ ենթակայության:

«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգ», կետ 2

*Հարց 389* **Տվյալ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, ի՞նչ ժամկետում է համապատասխան մարմինը հայտարարում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:**

- Առավելագույնը 45 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 40 աշխատանքային օր առաջ:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգ», կետ 2*

*Հարց 390* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ չի հայտարարվում և չի անցկացվում՝**

- Հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգ», կետ 3*

*Հարց 391* **Ո՞ր դեպքում չի կարող նշանակվել նույն հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող:**

- Տվյալ հաստատության տնօրենը, որի լիազորությունների դադարեցման արդյունքում առաջացել է տնօրենի պաշտոնի թափուր տեղ :

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգ», կետ 5*

*Հարց 392* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող կարող է նշանակվել՝**

- Տվյալ հաստատության խորհրդի անդամ չհանդիսացող տնօրենի տեղակալը:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգ», կետ 6, ենթակետ 1*

*Հարց 393* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնակատար կամ տնօրենի պարտականությունները կատարող կարող է նշանակվել՝**

- Տվյալ հաստատության խորհրդի անդամ չհանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի կրթության ոլորտի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի և կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

*«Պետական հանրակրթական ուսումնական հասփափության փնօրենի պաշփոնի թափուր փեղի մրցույթի հայփարարման, անցկացման, մասնագիփական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և փնօրենի նշանակման կարգ», կեփ 6, ենթակեփ 2*

*Հարց 394* **Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնակցության հայտերի բացակայության դեպքում լիազոր մարմինը ե՞րբ է հայտարարում է նոր մրցույթ:**

- հայտերի ընդունման վերջին օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

*«Պետական հանրակրթական ուսումնական հասփափության փնօրենի պաշփոնի թափուր փեղի մրցույթի հայփարարման, անցկացման, մասնագիփական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և փնօրենի նշանակման կարգ», կեփ 10*

*Հարց 395* **Քանի՞ օրվա ընթացքում է իրականացվում հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի փորձաքննությունը:**

- 10 աշխատանքային օրվա:

*«Պետական հանրակրթական ուսումնական հասփափության փնօրենի պաշփոնի թափուր փեղի մրցույթի հայփարարման, անցկացման, մասնագիփական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և փնօրենի նշանակման կարգ» կեփ 29*

*Հարց 396* **Ո՞վ է անցկացնում հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթը:**

- Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովը:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգ», կետ 19*

## ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

**ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի**

*Հարց 397* **Որքա՞ն բնակչություն ունեցող բնակավայրերում գործող հաստատությունների դեպքում է ձևավորվում միացյալ խորհուրդ:**

- Մինչև 3000:

*«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ», կետ 4*

*Հարց 398* **Քանի՞ անդամից կարող է կազմված լինել միացյալ խորհուրդը :**

- Առավելագույնը 19 անդամից :

*«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ», կետ 5, ենթակետ 2*

*Հարց 399* **Մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է՝**

- Խորհրդի 4 անդամ, որից երկուսին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը գրավոր ձևով մարզպետին :

*«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ», կետ 9*

*Հարց 400* **Ի՞նչ ժամկետով է ձևավորվում հաստատության խորհուրդը:**

- 3 տարի ժամկետով:

*«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ», կետ 3*

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ**

25 հուլիսի 2002 թվականի N 1392-Ն

*Հարց 401 .* **Նշվածներից ո՞րն է դպրոցի կառավարման մարմին.**

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը, Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ լիազորված մարմին).

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 27*

*Հարց 402* **Նշվածներից ո՞րն է դպրոցի կառավարման մարմին.**

- Գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 27*

*Հարց 403* **Նշվածներից ո՞րն է դպրոցի կառավարման մարմին.**

- Հիմնադիրը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*

*օրինակելի կանոնադրություն, կետ 27*

*Հարց 404 .* **Հանրակրթության բնագավառում հիմնադրի լիազորություններից է՝**

- Դպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 29, ենթակետ 3*

*Հարց 405* **Լիազորված մարմնի լիազորություններից է՝**

- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է իր լիազորության տակ գտնվող հաստատության տնօրենին և համակարգողին և նրանց հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 1*

*Հարց 406* **Լիազորված մարմնի լիազորություններից է՝**

- Դպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 2*

*Հարց 407* **Լիազորված մարմնի լիազորություններից է՝**

- Դպրոցին ամրացված՝ պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 4*

*Հարց 408* **Լիազորված մարմնի լիազորություններից է՝**

- Գույքի օտարման կամ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար համաձայնություն տալը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 31, ենթակետ 5*

*Հարց 409* **Դպրոցի խորհուրդը՝**

- Աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33, ենթակետ 1*

*Հարց 410* **Դպրոցի խորհուրդը՝**

- Քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33, ենթակետ 5*

*Հարց 411* **Դպրոցի խորհուրդը՝**

- Լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33, ենթակետ 6*

*Հարց 412* **Դպրոցի տնօրենը՝**

- Խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 1*

*Հարց 413* **Դպրոցի տնօրենը՝**

- Դպրոցի ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնում է դասաբաշխում, որի հիման վրա ձևավորվում է տարիֆիկացիան և հաստատվում նրա կողմից.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 2*

*Հարց 414* **Դպրոցի տնօրենը՝**

- Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կառավարության որոշմամբ հաստատված մանկավարժական աշխատողների անվանացանկի հիման վրա ձևավորում և հաստատում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ աշխատողների անվանացանկը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 3*

*Հարց 415* **Դպրոցի տնօրենը՝**

- Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմնին ներկայացնելու համար.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 4*

*Հարց 416* **Դպրոցի տնօրենը՝**

- Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալի, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժական աշխատողների հաշվետվությունները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 7*

*Հարց 417* **Դպրոցի տնօրենը՝**

- Նախարարության հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 10*

*Հարց 418* **Դպրոցի տնօրենը՝**

- Համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական աշխատողների, օպերատորի և գործավարի (օգնականի), իր տեղակալի, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (առարկայական մեթոդական միավորումների) ղեկավարների, դասղեկների ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 11*

*Հարց 419* **Դպրոցի տնօրենը՝**

- Ղեկավարում է մանկավարժական խորհրդի և համակարգում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 12*

*Հարց 420* **Դպրոցի տնօրենը՝**

- Կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը (կամ ապահովում է ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմումը) և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 13*

*Հարց 421* **Դպրոցի տնօրենը՝**

- Աջակցում է ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական և կամավոր ատեստավորումներին, ինչպես նաև տարակարգ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ աշխատանքների կատարմանը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 15*

*Հարց 422* **Դպրոցի տնօրենը՝**

- Խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 16*

*Հարց 423* **Դպրոցի տնօրենը՝**

- Ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 18*

*Հարց 424* **Դպրոցի տնօրենը՝**

- Սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը, օրենսդրությամբ սահմանված կարգով քայլեր է ձեռնարկում նրանց սոցիալական և հոգեբանական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստանալու իրավունքի իրացման ապահովման համար, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է տարածքը սպասարկող խնամակալության և հոգաբարձության մարմնին.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 23*

*Հարց 425* **Դպրոցի տնօրենը՝**

- Ապահովում է դպրոցում իր գործառույթներից բխող՝ գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 22*

*Հարց 426* **Դպրոցի տնօրենը՝**

- Առաջարկություն է ներկայացնում համակարգողին՝ մանկավարժական աշխատողներին դրամական խրախուսում տրամադրելու համար.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 27*

*Հարց 427* **Դպրոցի տնօրենը՝**

- Համակարգողի կազմած նախահաշվի նախագծի վերաբերյալ ներկայացնում է դիտարկումներ.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 48, ենթակետ 29*

*Հարց 428* **Դպրոցի համակարգողը՝**

- Լիազոր մարմին է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունը, բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման մասին հայտը և հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը՝ դրանում ներկայացնելով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 1*

*Հարց 429* **Դպրոցի համակարգողը՝**

- Հաստատում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորված տարիֆիկացիան.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 2*

*Հարց 430* **Դպրոցի համակարգողը՝**

- Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորում և հաստատում է վարչատնտեսական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքների անվանացանկը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 3*

*Հարց 431* **Դպրոցի համակարգողը՝**

- Գնահատում է տնօրենի տրամադրած՝ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ կարիքների համար պահանջվող ծախսերը, կազմում է նախահաշիվը և ներկայացնում է լիազոր մարմին.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 4*

*Հարց 432* **Դպրոցի համակարգողը՝**

- Ապահովում է գնումների գործընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 5*

*Հարց 433* **Դպրոցի համակարգողը՝**

- Համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է վարչատնտեսական աշխատակիցների թափուր տեղի համար մրցույթը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 6*

*Հարց 434* **Դպրոցի համակարգողը՝**

- Ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 7*

*Հարց 435* **Դպրոցի համակարգողը՝**

- Ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 9*

*Հարց 436* **Դպրոցի համակարգողը՝**

- Ապահովում է հաշվապահական հաշվառման իրականացումը և օրենքով սահմանված կարգով ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 10*

*Հարց 437* **Դպրոցի համակարգողը՝**

- Ապահովում է դպրոցում գործածության ենթակա վարչատնտեսական փաստաթղթերի շրջանառությունը, վարումը և պահպանումը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 11*

*Հարց 438* **Դպրոցի համակարգողը՝**

- Օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում ներկայացնում է դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում, բացում է հաշվարկային և գանձապետական հաշիվներ, տալիս է լիազորագրեր.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 12*

*Հարց 439* **Դպրոցի համակարգողը՝**

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 52, ենթակետ 13*

*Հարց 440* **Դպրոցի համակարգողը՝**

- Օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնող մարմինների արձանագրած՝ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների, օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի, խորհրդի որոշումների և կնքված պայմանագրերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, այդ թվում՝ անվտանգության տեխնիկայի ապահովման, վարչատնտեսական աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև սովորողների և աշխատակիցների կյանքի և առողջության պահպանման և ուսումնական հաստատության՝ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման համար.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 53*

*Հարց 441* **Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է**

- տնօրենի հրամանով.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68*

*Հարց 442* **Մանկավարժական խորհուրդը իր կազմից, փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի այն անդամներին, ովքեր՝**

- Քվեարկության արդյունքում երկու առավել ձայն հավաքած ներկայացուցիչներ են.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 70*

*Հարց 443* **Ե՞րբ է գումարվում մանկավարժական խորհրդի առաջին նիստը.**

- Օգոստոսին.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68*

*Հարց 444* **Մանկավարժական խորհուրդը քննարկում է.**

- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 1*

*Հարց 445* **Մանկավարժական խորհուրդը քննարկում է.**

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 3*

*Հարց 446* **Մանկավարժական խորհուրդը քննարկում է.**

- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ուսումնական խմբակների, երկարօրյա խմբերի և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 4*

*Հարց 447* **Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է.**

- մանկավարժական խորհրդի անդամներից ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 74*

*Հարց 448* **Ի՞նչ ժամկետում է կազմվում մանկավարժական խորհրդի նիստի արձանագրությունը.**

- երեք աշխատանքային օրվա ընթացքում.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 74*

*Հարց 449* **Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են.**

- ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ (սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ) և այլ անձինք.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 77*

*Հարց 450* **Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են.**

- քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81*

*Հարց 451* **Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումն ապահովում է.**

- դպրոցի տնօրենը և արդյունքների մասին պարբերաբար զեկուցում է մանկավարժական խորհրդին.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 83*

*Հարց 452* **Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են.**

- նույն առարկայի կամ հարակից առարկաների երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 84*

*Հարց 453* **Մեթոդական միավորումը սահմանված կարգով մշակում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում.**

- քննական և ստուգողական առաջադրանքներ՝ առնվազն երեք տարբերակով, ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված անհատական առարկայական պլաններ, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցեր.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 87, ենթակետ 12*

*Հարց 454* **Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են.**

- դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 90*

*Հարց 455* **Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ.**

- առնվազն չորս անգամ.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 96*

*Հարց 456* **Դպրոցի ծնողական խորհուրդը կարող է.**

- տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 9*

*Հարց 457* **Առարկայական մեթոդական միավորումը մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում**

- ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 87, ենթակետ 9*

*Հարց 458* **Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝**

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 3*

*Հարց 459* **Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝**

- Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և հաշվետվությունը, դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 6*

*Հարց 460* **Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝**

- Ուսումնական հաստատությանը փորձաքննության տրամադրված կամ իր կողմից մշակված հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, դպրոցի ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 71, ենթակետ 5*

*Հարց 461* **Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում է՝**

- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 24*

*Հարց 462* **Հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է՝**

- Պետական ամփոփիչ ատեստավորում.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*

*օրինակելի կանոնադրություն, կետ 24*

*Հարց 463* **Ուսումնական խմբերը՝ դասարանները, կազմավորվում են՝**

- Ըստ սովորողների տարիքի և նրանց կողմից ուսումնական ծրագրի յուրացման արդյունքի.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 23*

*Հարց 464* **Կառավարման նոր համակարգի անցած հանրակրթական ուսումնական հաստատությունում համակարգողի բացակայության դեպքում ո՞վ է իրականացնում համակարգողին վերապահված գործառույթները:**

- Տվյալ հաստատության տնօրենը:

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 60*

*Հարց 465* **Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո ի՞նչ ժամանակահատվածում է համակարգողն օրենսդրությամբ սահմանված կարգով դպրոցի նախահաշվի նախագիծը ներկայացնում տնօրենին:**

- մեկ ամսվա ընթացքում:

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 55*

*Հարց 466* **Ո՞վ է ապահովում հանրակրթական ուսումնական հաստատությունում արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը:**

- Դպրոցի տնօրենը:

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 48, ենթակետ 18*

*Հարց 467* **Ո՞վ է ապահովում հանրակրթական ուսումնական հաստատությունում արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները:**

- Դպրոցի համակարգողը:

*25.07.2002թ. N 1392-Ն որոշում, հավելված 3, կետ 52, ենթակետ 7*

*Հարց 468* **Ում հրամանով է ձևավորվում Մանկավարժական խորհուրդը**

- տնօրենի հրամանով.

*«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68*

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 771-Ն ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 900-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

8 ապրիլի 2010 թվականի N 439-Ն

*Հարց 469* **Ի՞նչ է կարողունակությունը՝**

- Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 6*

*Հարց 470* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Լեզվական գրագիտություն և կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 1*

*Հարց 471* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Սովորել սովորելու կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 2*

*Հարց 472* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 3*

*Հարց 473* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 4*

*Հարց 474* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Թվային և մեդիա կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 5*

*Հարց 475* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Մշակութային կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 6*

*Հարց 476* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 7*

*Հարց 477* **Ո՞րն է միջնակարգ կրթության կարողունակություն՝**

- Տնտեսական կարողունակություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 8, ենթակետ 8*

*Հարց 478* **Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ՝**

- Գիտելիք.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 1*

*Հարց 479* **Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ՝**

- Հմտություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 2*

*Հարց 480* **Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ՝**

- Դիրքորոշում.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 3*

*Հարց 481* **Ո՞րն է չափորոշչով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչ՝**

- Արժեքային բաղադրիչ.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 13, ենթակետ 4*

*Հարց 482* **Ի՞նչ է ուսումնական բնագավառը՝**

- Ուսումնական բնագավառը կրթության բովանդակության որոշակի տիրույթ է, որն առանձնանում է ուսումնառության օբյեկտով և բնույթով, գործունեության և ճանաչողության յուրահատուկ մեթոդներով:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 14*

*Հարց 483* **Ո՞ր մարմինն է մշակում առարկայական ծրագիրը՝**

- Առարկայի ծրագիրը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված նորմատիվ փաստաթուղթ է:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16*

*Հարց 484 .* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը ՝**

- Ուսուցման նպատակը՝ ըստ կրթական աստիճանների.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 1*

*Հարց 485* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը ՝**

- Առարկայի (դասընթացի) ընդհանուր բնութագիրը.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 2*

*Հարց 486* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը՝**

- Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ կրթական աստիճանների.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 3*

*Հարց 487* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը ՝**

- Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 4*

*Հարց 488* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը ՝**

- Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցության նկարագրությունը.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 5*

*Հարց 489* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը ՝**

- Ժամաքանակի բաշխումը ըստ դասարանների.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 6*

*Հարց 490* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը՝**

- Թեմաները և դրանց բովանդակությունը.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 7*

*Հարց 491* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը՝**

- Թեմաների ուսումնառության ակնկալվող արդյունքները.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 8*

*Հարց 492* **Ի՞նչ է ներառում ուսումնական առարկայի ծրագիրը՝**

- Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների գնահատումը.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 16, ենթակետ 9*

*Հարց 493* **Ի՞նչ է մշակվում առարկայական ծրագրերի հիման վրա՝**

- Առարկայի ծրագրերի հիման վրա սահմանված կարգով մշակվում են թեմատիկ և անհատական ուսուցման պլաններ, ստեղծվում են դասագրքեր, ուսուցչի ձեռնարկներ և այլ ուսումնական նյութեր:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 17*

*Հարց 494* **Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ՝**

- Հայոց լեզու և գրականություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 1*

*Հարց 495* **Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ՝**

- Հայրենագիտություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 2*

*Հարց 496* **Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ**

- Օտար լեզուներ.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 3*

*Հարց 497* **Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ**

- ԲՏՃՄ.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 4*

*Հարց 498* **Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ**

- Արվեստ և արհեստ.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 5*

*Հարց 499* **Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ**

- Հասարակություն, հասարակական գիտություններ.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 6*

*Հարց 500* **Տրվածներից ո՞րն է ուսումնական բնագավառ**

- Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20, ենթակետ 7*

*Հարց 501* **Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը ներառում է՝**

- ուսումնական բնագավառները.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 19*

*Հարց 502* **Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը ներառում է՝**

- Ըստ կրթական աստիճանների ուսումնական բնագավառներին հատկացվող ժամաքանակները.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20*

*Հարց 503* **Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը ներառում է՝**

- սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը՝ ըստ կրթական երեք աստիճանների.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20*

*Հարց 504* **Ուսումնական պլանների և ուսումնական պլաններում փոփոխությունների հաստատումը ըստ անհրաժեշտության կատարվում է՝**

- Ոչ ուշ, քան նոր ուսումնական տարվա սկզբից առնվազն երկու ամիս առաջ:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 32*

*Հարց 505* **Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝**

- Հայոց լեզվի և գրականության ուսուցումը

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

*Հարց 506* **Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝**

- Հայոց պատմության ուսուցումը.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

*Հարց 507* **Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝**

- Մաթեմատիկայի ուսուցումը.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

*Հարց 508* **Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝**

- Առնվազն մեկ օտար լեզվի ուսուցանումը՝ առանձին կամ ինտեգրված առարկաների ձևով:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

*Հարց 509* **Տրվածներից ո՞րը ուսումնական բնագավառ չէ**

- ՆԶՊ.

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 20,*

*Հարց 510* **Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է՝**

- հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության, մաթեմատիկայի և առնվազն մեկ օտար լեզվի ուսուցանումը՝ առանձին կամ ինտեգրված առարկաների ձևով:

*Հանրակրթության պետական չափորոշիչ, կետ 35*

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*02.03.2023թ. N-259-Ն որոշում*

*Հարց 511* **Քանի՞ աշխատանքային օրվա ընթացքում է լիազոր մարմինը կազմակերպում և իրականացնում համակարգողի պաշտոնի թափուր տեղի նշանակումը:**

- 30 աշխատանքային օրվա ընթացքում:

*02.03.2023թ. N-259-Ն որոշում, կետ 4*

*Հարց 512* **Քանի՞ աշխատանքային օրվա ընթցքում է լիազորված մարմինը հաստատության համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու մասին հայտարարությունը հրապարակում www.azdarar.am կայքում:**

- 3 աշխատանքային օրվա ընթացքում:

*02.03.2023թ. N259-Ն որոշում, կետ 5*

*Հարց 513* **Հաստատության համակարգողին ներկայացվող պարտադիր պայմաններից է արդյոք հավաստագիր ունենալը:**

- Ոչ:

*02.03.2023թ. N259-Ն որոշում, կետ 8*

## ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*12.01.2023թ. N 57-Ն որոշում,* կետ

*Հարց 514* **Հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու համար իրավաբանական անձին առնվազն քանի հաստատության վարչատնտեսական գործառույթներ կարող են պատվիրակվել:**

- Առնվազն 3

*12.01.2023թ. N 57-Ն որոշում,* կետ 2

*Հարց 515* **Հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների քանի՞ հիմնական ուղղություններ են առանձնացվում:**

- 6

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4*

*Հարց 516* **Ո՞րն է հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններից՝**

- Հաշվապահություն:

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4, ենթակետ 1*

*Հարց 517* **Ո՞րն է հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններից՝**

- Սննդի կազմակերպում:

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4, ենթակետ 3*

*Հարց 518* **Ո՞րն է հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններից՝**

- անվտանգության տեխնիկայի ապահովում:

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 4, ենթակետ 5*

*Հարց 519* **Ո՞վ է իրականացնում վարչատնտեսական գործառույթների պատվիրակումն իրավաբանական անձին:**

- Լիազոր մարմինը:

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 6*

*Հարց 520* **Ու՞մ է ներկայացնում աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրությունը պատվիրակված անձը:**

- Համակարգողին

*12.01.2023թ. N 57-Ն որոշում, կետ 12*

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում*

*Հարց 521* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի որոշումները նախարարություն բողոքարկվելու դեպքում քանի՞ անդամից է ձևավորվում նախարարի հրամանով ձևավորվող բողոքարկման հանձնաժողովի կազմը:**

- Երեք:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 30*

*Հարց 522* **Քանի՞ օրվա ընթացքում է տարակարգի բողոքարկման հանձնաժողովն ուսումնասիրում ներկայացված փաստաթղթերը, կազմում հանրապետական հանձնաժողովի որոշումներն անփոփոխ թողնելու կամ վերանայելու վերաբերյալ համապատասխան եզրակացություն և ներկայացնում նախարարին:**

- Երեք աշխատանքային օրվա ընթացքում:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 31*

*Հարց 523* **Տարակարգի գործողության վաղաժամկետ դադարեցման հիմքերից է՝**

- Երբ ուսուցիչը զրկվում է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 34, ենթակետ 2*

*Հարց 524* **Տարակարգի գործողության վաղաժամկետ դադարեցման հիմքերից է՝**

- Երբ հերթական ատեստավորման արդյունքում ուսուցիչը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 34, ենթակետ 3*

*Հարց 525* **Կարո՞ղ է տարակարգի գործողության վաղաժամկետ դադարեցման հիմք լինել:**

- Հերթական ատեստավորման արդյունքում ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելը:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 34, ենթակետ 3*

*Հարց 526* **Ե՞րբ է պահպանվում ուսուցչի՝ տարակարգը:**

- Տարակարգի հնգամյա ժամկետի ընթացքում ուսուցչի՝ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխվելու դեպքում:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 35, ենթակետ 1*

*Հարց 527* **Ուսուցչի՝ տարակարգի հնգամյա ժամկետի ընթացքում աշխատանքից ազատվելուց հետո, որևէ հաստատությունում նորից ուսուցչական աշխատանքի անցնելու դեպքում պահպանվո՞ւմ է արդյոք տարակարգը:**

- Տարակարգը պահպանվում է հնգամյա ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 35, ենթակետ 2*

*Հարց 528* **Երրորդ աստիճանի տարակարգի համար ուսուցչի աշխատավարձի քանի՞ տոկոսի չափով է տրվում հավելավճարը:**

- 30 %-ի չափով:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 36, ենթակետ 3*

*Հարց 529* **Ի՞նչ պարբերականությամբ է տրվում տարակարգ ստացած ուսուցչի հասանելիք հավելավճարը:**

- Յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 37*

*Հարց 530* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովը քանի՞ անդամներից է ձևավորվում:**

- 11 անդամներից:

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 4*

*Հարց 531* **Տարակարգին դիմող ուսուցիչը ի՞նչ պետք է ներկայացնի՝ հավաստելու դասընթացի և դասի պլանավորման հմտությունը**

- դիմող ուսուցչի կողմից տվյալ ուսումնական տարում դասավանդվող առարկայի (առարկաների) տարեկան թեմատիկ պլանը (պլանները), ինչպես նաև տարակարգի համար դիմելու նախորդ ամսվա ընթացքում կազմած բոլոր դասերի պլանները՝ իր դասավանդած բոլոր դասարանների համար

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 22, ենթակետ 2*

*Հարց 532* **Տարակարգին դիմող ուսուցիչը ի՞նչ պետք է ներկայացնի՝ հավաստելու Կրթության ոլորտի օրենսդրության և պրակտիկայի իմացությունը**

- գրավոր կարծիք կամ առաջարկություններ հանրակրթության ոլորտը կարգավորող առնվազն մեկ իրավական ակտի վերաբերյալ

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 22, ենթակետ 12*

*Հարց 533* **Սահմանված պահանջների միջին հաշվարկով քանի՞ տոկոսին համապատասխանելու դեպքում է շնորհվում առաջին աստիճանի տարակարգ**

- առնվազն 70 %-ն ապահովելու դեպքում

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 29, ենթակետ 1*

*Հարց 534* **Սահմանված պահանջների միջին հաշվարկով քանի՞ տոկոսին համապատասխանելու դեպքում է շնորհվում չորրորդ աստիճանի տարակարգ**

- առնվազն 80 %-ն ապահովելու դեպքում

*29.09.2022թ. N 1509-Ն որոշում, կետ 29, ենթակետ 4*

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*24.02.2023թ. N 09-Ն հրաման*

*Հարց 535* **Ո՞վ կարող է վարել խմբակը հանրակրթական ուսումնական հաստատությունում:**

- Խմբակը կարող է վարել տվյալ հաստատության ուսուցիչը կամ այն անձը, որն ունի բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ (ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

*24.02.2023թ. N 09-Ն հրաման, կետ 8*

*Հարց 536* **Կրթական որևէ աստիճանում յուրաքանչյուր խմբակին հատկացվող ժամաքանակը չի կարող գերազանցել՝**

- Շաբաթական 2 ակադեմիական ժամը:

*24.02.2023թ. N 09-Ն հրաման, կետ 18*

*Հարց 537* **Ինչի՞ն պետք է համապատասխանի յուրաքանչյուր կրթական աստիճանում գործող խմբակի ծրագիրը:**

- պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին:

*24.02.2023թ. N 09-Ն հրաման, կետ 20*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*24.02.2023թ. N 08-Ն հրաման*

*Հարց 538* **Ու՞մ միջոցով նաև Նախարարությունը կարո՞ղ է Ուսումնական նյութի փորձաքննությունը պատվիրել և իրականացնել:**

- նաև այլ կազմակերպությունների միջոցով:

*24.02.2023թ. N 08-Ն հրաման, կետ 8*

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻՆ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*09.06.2022թ. N 20-Ն հրաման*

*Հարց 539* **Ո՞վքեր կարող են մասնակցել դասագրքերի ստեղծման մրցույթին:**

- Ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք:

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 17*

*Հարց 540* **Ի՞նչ եղանակով է իրականացվում դասագրքերի ստեղծումն ու հրատարակումը:**

- Մրցութային եղանակով:

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 15*

*Հարց 541* **Ո՞րն է հանդիսանում դասագրքին ներկայացվող պահանջ**

- դասագիրքը և ուսումնաօժանդակ գրականությունը պետք է հնարավորություն ընձեռեն բազմակողմանիորեն ծանոթանալու ներկայացվող նյութին կամ թեմային և նպաստեն սովորողի մոտ դրա վերաբերյալ սեփական դիրքորոշման ու կարծիքի ձևավորմանը,

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 2, ենթակետ 4*

*Հարց 542* **Ո՞րն է հանդիսանում դասագրքին ներկայացվող պահանջ**

- դասագրքում և ուսումնաօժանդակ գրականության մեջ պետք է օգտագործվեն տեղեկատվության փոխանցման տարբեր եղանակներ՝ տեքստային, պատկերային, գրաֆիկական, թվային և այլ՝ փոխլրացման և համադրման սկզբունքով՝ խուսափելով կրկնություններից,

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 2, ենթակետ 6*

*Հարց 543* **Ինչի՞ց է կախված տվյալ դասագրքի օգտագործման նվազագույն ժամկետը**

- կախված տվյալ առարկայի շաբաթական դասաժամերի քանակից

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 2, ենթակետ 8*

*Հարց 544* **Կարո՞ղ է արդյոք ծնողը հրաժարվել թղթային դասագրքից**

- Այո՝ օգտագործելով էլեկտրոնային կամ հիբրիդ դասագիրք

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 11*

*Հարց 545* **Ո՞րն է դասագրքի փորձաքննության համապատասխանության փուլը:**

- Այս փուլում գնահատվում է ներկայացված դասագրքում նյութի գիտական համապատասխանությունը

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 21, ենթակետ 1*

*Հարց 546* **Ի՞նչ մասնագետ է ընդգրկվում դասագրքերի փորձաքննության հանձնաժողովում**

- բժիշկ-հիգիենիստ:

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 36, ենթակետ 6*

*Հարց 547* **Ի՞նչ մասնագետ է ընդգրկվում դասագրքերի փորձաքննության հանձնաժողովում**

- նկարիչ-ձևավորող

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 36, ենթակետ 5*

*Հարց 548* **Ի՞նչ մասնագետ է ընդգրկվում դասագրքերի փորձաքննության հանձնաժողովում**

- մանկավարժ-հոգեբան

*09.06.2022թ. N 20-Ն հրաման, կետ 36, ենթակետ 3*

*Հարց 549* **Հանրակրթական ուսումնական հաստատությունում ո՞ր աշխատատեղն է մարվում թափուր:**

- Մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված՝ ուսուցչի չզբաղեցրած պաշտոնը:

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 2*

*Հարց 550* **Հանրակրթական ուսումնական հաստատությունում թափուր մնացած պաշտոնի առկայության դեպքում մրցույթ չի հայտարարվում, եթե՝**

- Տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում):

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 10, 1-ին ենթակեփ*

*Հարց 551* **Քանի՞ փուլով է անցկացվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը:**

- Երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 36

*Հարց 552* **Ե՞րբ է նշանակվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման օր:**

- Փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 15*

*Հարց 553* **Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի թեստավորման փուլի հարցաշար:**

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 37*

*Հարց 554* **Քանի՞ անդամից է կազմված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութի հանձնաժողովը:**

- 5 անդամից:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 22*

*Հարց 555* **Ո՞վ է հաստատում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութային հանձնաժողովի անվանական կազմը:**

- Հաստատության տնօրենը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 21*

*Հարց 556* **Ի պաշտոնե ո՞վ է հանդիսանում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նախագահը:**

- Հաստատության տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը կամ պարտականությունները կատարողը):

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 23*

*Հարց 557* **Ե՞րբ է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նիստն համարվում իրավազոր:**

- Եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 25*

*Հարց 558* **Քանի՞ ձայնով են ընդունվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի որոշումները:**

- Առնվազն 3 կողմ ձայնով:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 35*

*Հարց 559* **Ո՞վ է բացատրում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի թեստավորման փուլի անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը և պատասխանում մասնակիցների հարցերին, ինչպես նաև տեղեկացնում է թեստավորման փուլի անցկացման տևողության մասին:**

- Հանձնաժողովի քարտուղարը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*
*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 45*

*Հարց 560* **Որքա՞ն է թեստավոման առաջադրանքի համար տրվող ժամանակը:**

- 90 րոպե

*Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*
*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 50*

*Հարց 561* **Ու՞մ կողմից են կազմվում թեստավորման փուլի առաջադրանքները:**

- Յուրաքանչյուր հաստատություն նախարարության կողմից մշակված և պաշտոնական կայքէջում և «Կրթություն» շաբաթաթերթում հրապարակված հարցաշարից պատահական ընտրությամբ կազմում է 50 հարցից բաղկացած թեստ:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*
*թափուր տեղի համար մրցույթի» կարգ,կետ 40*

*Հարց 562* **Հարցազրույցի փուլի ժամանակ մասնակիցը վիճակահանությամբ քանի՞ հարցատոմս է ընտրում:**

- Մեկ հարցատոմս՝ բաղկացած հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարի 5 հարցերից:

*Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*

*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 64*

*Հարց 563* **Ե՞րբ է մասնակիցը համարվում է հարցազրույցի փուլը հաղթահարած:**

- Եթե Հարցազրույցի փուլում մասնակցի ստացած միավորների տոկոսային արտահայտությունը առնվազն յոթանասուն տոկոս է:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*
*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 75*

*Հարց 564* **Մասնակիցը մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ է անցնում՝**

- թեստավորման առաջադրանքների առնվազն 90 % ճիշտ պատասխանելու դեպքում:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*
*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 51*

*Հարց 565* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի թեստավորման փուլի արդյունքները ե՞րբ կարող են բողոքարկվել մրցութային հանձնաժողովին:**

- Թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*
*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 56*

*Հարց 566* **Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի ո՞ր մասնակիցն է մրցույթում հաղթող ճանաչվում:**

- Առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը:

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 76*

*Հարց 567* **Եթե հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթում մեկից ավելի մասնակիցներ հավաքել են առավելագույն հավասար միավորներ, ապա ընտրվում է այն մասնակիցը,**

- որին կողմ է քվեարկել դպրոցի տնօրենը:

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի օրինակելի կարգ, կեփ 76*

*Հարց 568* **Նշվածներից ո՞ր մարմինը իրավասու չէ մշակելու հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի թեստավորման փուլի հարցաշար:**

- Մարզպետարանը:

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 37*

*Հարց 569* **Ո՞վ է հաստատում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութային հանձնաժողովի անհատական կազմը:**

- հաստատության տնօրենը:

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 21*

*Հարց 570* **Ո՞վ կարող է հանդիսանալ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նախագահ**

- Հաստատության տնօրենի պաշտոնակատար:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 23*

*Հարց 571* **Կարո՞ղ է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նիստը համարվել իրավազոր:**

- եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի 4 անդամ:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 25*

## ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**14 հոկտեմբերի 2010 թ N 1507-Ն**

*Հարց 572* **Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում հանրակրթական ուսումնական հաստատության սովորողը քանի՞ անգամ կարող է վաղաժամկետ փոխադրվել դասարանից դասարան:**

- Միայն մեկ անգամ:

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 5*

*Հարց 573* **Հանրակրթական ուսումնական հաստատության ո՞ր դասարանների սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ չեն կազմակերպվում:**

- Առաջին և երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական դասարանների սովորողների համար:

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 6*

*Հարց 574* **Ինչպե՞ս են նշանակվում դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների կիսամյակային և տարեկան գնահատականները:**

- Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների քննական գնահատականները համարվում են կիսամյակային և տարեկան գնահատականներ:

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 16*

*Հարց 575* **Ո՞ր դասարանների ծրագրային նյութերից են կազմակերպվում էքստեռն փոխադրական քննությունները (գիտելիքների ստուգումը):**

- Տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի և հաջորդ դասարանի 1-ին կիսամյակի ուսումնական պլաններով նախատեսված բոլոր առարկաների ծրագրային նյութի շրջանակներում:

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտականշ քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 9, ենթակետ 3*

*Հարց 576* **Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ և քանի՞ միավոր գնահատվելու դեպքում էքստեռն քննություններ հանձնած սովորողը կարող է վաղաժամկետ փոխադրվել դասարանից դասարան:**

- Փոխադրական բոլոր քննություններից 10 բալային համակարգում 9-10 միավոր գնահատվելու դեպքում դպրոցի մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու մասին:

*«Էքսպեռնդրսեկություն փոխադրական և ավարփական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 13, 2-րդ ենթակետ*

*Հարց 577* **Ո՞ր տարիքի անձինք կարող են մասնակցել էքստեռն ավարտական քննություններին՝ հիմնական կրթության վկայական ստանալու համար:**

- Մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 16 տարին լրացած (լրացող) անձը:

*«Էքսպեռնդրսեկություն փոխադրական և ավարփական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 18*

*Հարց 578* **Ո՞վ կարող է էքստեռն կարգով ստանալ միջնակարգ կրթության ատեստատ:**

- Էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստացած և 18 տարին լրացած դրսեկը:

*«Էքսպեռնդրսեկություն փոխադրական և ավարփական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 19, ենթակետ 1,*

*Հարց 579* **Ո՞վ կարող է էքստեռն կարգով ստանալ միջնակարգ կրթության ատեստատ:**

- Հիմնական կրթության վկայական ունեցող անձը, եթե վկայական ստանալու տարվանից անցել է 4 և ավելի տարի ( տարիների հաշվարկը կատարվում է ուսումնական պարապմունքների ավարտման օրվանից):

*«Էքսփեռն դրսեկություն փոխադրական և ավարփական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 19, ենթակետ 2,*

*Հարց 580* **Հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար էքստեռն ավարտական քննությունները քանի՞ քննաշրջաններով են կազմակերպվում:**

- 3 քննաշրջաններով:

*«Էքսպեռնդրսեկություն փոխադրական և ավարփական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 23*

*Հարց 581* **Որքա՞ն ժամանակ են ուժի մեջ դրսեկի ստացած գնահատականները:**

- Մինչև հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալը:

*«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 36*

*Հարց 582* **Հիմնական կամ միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթում նշվածներից ո՞ր մարմինն է լիազորված կատարել «Էքստեռն» նշումը:**

- Նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը:

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 40*

*Հարց 583* **Էքստեռն ավարտական քննությունները գերազանց հանձնած անձը չի կարող պարգևատրվել:**

- Գովասանագրով կամ մեդալով:

*«Էքստեռնդրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 41*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 նոյեմբերի 2010 թվականի N 1496-Ն

*Հարց 584* **Ինչի՞ն է նպատակաուղղված վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունը:**

- Հանրակրթական հիմնական ծրագրերից դուրս՝ կամավորության սկզբունքով, սովորողների, քաղաքացիների հետաքրքրությունների և նախասիրություն ների բավարարմանը, հոգևոր, մարդասիրական, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ2*

*Հարց 585* **Վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունը, ո՞ր դասարանների սովորողների մասնակցությամբ և ո՞ր առարկաներից կարող է իրականացվել՝**

- 1-9-րդ դասարանցիների մասնակցությամբ, միայն ուսումնական պլանով տվյալ դասարանի առարկայացանկում չընդգրկված առարկաներից:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 3*

*Հարց 586* **Բացի լրացուցիչ կրթությունից ի՞նչ այլ ծառայություններ կարող է իրականացնել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը:**

- Մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումներ, սովորողների առողջության պահպանման միջոցառումներ, սովորողների սննդի կազմակերպում, սովորողների երկարօրյա ուսուցման և կամ գիշերակացի և ամառային հանգստի կազմակերպում, ուսումնաարտադրական գործառնության ծավալում և արտադրանքի իրացում:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 4*

*Հարց 587* **Ո՞ր մարմինն է հաստատում լրացուցիչ կրթական ծառայության մատուցման պայմանագրի օրինակելի ձևը՝**

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 6*

*Հարց 588* **Լրացուցիչ կրթական ծառայության իրականացումից հետո պատվիրատուին կատարողի կողմից ինչպիսի՞ փաստաթուղթ կարող է տրվել:**

- Կատարողի կողմից հաստատված և կնքված մասնագիտական որակավորում չպարունակող փաստաթուղթ:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 7*

*Հարց 589* **Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը պարտավոր է՝**

- Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ համապատասխան լիազոր մարմնի միջոցով նախարարությանը ներկայացնել տեղեկություններ:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 8*

*Հարց 590* **Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը ու՞մ միջոցով կարող է իրականացնել լրացուցիչ կրթական ծառայություններ՝**

- Հաստատության, այնպես էլ հրավիրված մասնագետների և (կամ) մանկավարժների միջոցով:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 9*

*Հարց 591* **Ի՞նչն է պարտադիր լրացուցիչ կրթական ծառայություններ իրականացնող մասնագետի համար՝**

- Համապատասխան մասնագիտական որակավորումը:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 10*

*Հարց 592* **Ու՞մ ներկայությունն է պարտադիր սպորտային խմբակների դեպքում:**

- Բժշկի

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 11*

*Հարց 593* **Ո՞վ է հաստատում լրացուցիչ կրթական ծառայության ուսումնական պլանը, ծրագիրը և դասացուցակը:**

- Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 12*

*Հարց 594* **Ո՞ր մարմինն է հաստատում լրացուցիչ կրթական ծառայության վարձավճարի և կրթական ծառայություններ իրականացնողների վճարի չափը:**

- Հաստատության կառավարման խորհրդի որոշմամբ՝ տնօրենը ՝ հրամանով:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և /կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ 13*

*Հարց 595* **Ո՞վ և ի՞նչ կարգով է կատարում լրացուցիչ կրթական ծառայությունների համար վճարումները:**

- Պատվիրատուն՝ կանխիկ կամ բանկային փոխանցման միջոցով:

*1496-ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և*

*/կամ/ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ, կետ*

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման 14***

*Հարց 596* **Տնային ուսուցման կազմակերպման մասնակիցներն են՝**

- սովորողները, ծնողները, այդ սովորողների ուսուցման կազմակերպման մեջ ներգրավված ուսուցիչները, մանկավարժական այլ աշխատողներ, ինչպես նաև Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետները՝ ըստ անհրաժեշտության:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 7-րդ մաս*

*Հարց 597* **Ինչի՞ համաձայն է սովորողների համար կազմակերպվում տնային ուսուցում:**

- կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանի, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի պարագայում նաև Հաստատության կազմած ԱՈՒՊ-ի համաձայն:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 8-րդ մաս*

*Հարց 598* **Սովորողի համար տնային ուսուցում կազմակերպելու համար ծնողը ի՞նչ փաստաթուղթ է ներկայացնում հաստատություն:**

- սովորողի առողջության վերաբերյալ տեղեկանք

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 9-րդ մաս, 2-րդ կետ*

*Հարց 599* **Ե՞րբ է սկսում իրականացվել տնային ուսուցումը**

- Տնային ուսուցումը կազմակերպվում է պայմանագրի կնքման պահից

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 12-րդ մաս,*

*Հարց 600* **Սովորողի տնային ուսուցումը կարո՞ղ է դադարեցվել վաղաժամկետ**

- Այո, ծնողի նախաձեռնությամբ:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 14-րդ մաս,*

*Հարց 601* **Հաստատությունը տնային ուսուցման ընթացքում՝**

- ապահովում է սովորողի ուսումնառության իրականացումը տանը՝ ներառյալ էլեկտրոնային ուսուցման կիրառումը և հեռավար ուսուցման տեխնոլոգիաների տրամադրումը՝ ըստ անհրաժեշտության:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 16-րդ մաս, 3-րդ կետ*

*Հարց 602* **Հաստատությունը տնային ուսուցման ընթացքում՝**

- իրականացնում է սովորողի ուսումնական առաջադիմության ընթացիկ գնահատում, ամփոփիչ ստուգում, ատեստավորում և սովորողի փոխադրում հաջորդ դասարան

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 16-րդ մաս, 9-րդ կետ*

*Հարց 603* **Հաստատությունը տնային ուսուցման ընթացքում՝**

- խորհրդատվություն է տրամադրում սովորողի ծնողներին՝ սովորողի կրթության գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 2-րդ գլուխ, 16-րդ մաս, 10-րդ կետ*

*Հարց 604* **Տնային ուսուցումը կազմակերպվում է՝**

- պետական բյուջեով Հաստատությանը հատկացված ֆինանսական միջոցների հաշվին:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 3-րդ գլուխ, 20-րդ մաս*

*Հարց 605* **Ինչպե՞ս է իրականացվում տնային ուսուցում իրականացնող ուսուցիչների վարձատրությունը**

- Վարձատրությունն իրականացվում է ժամավճարով՝ հաշվի առնելով Հաստատությունում սահմանված դրույքաչափը:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 3-րդ գլուխ, 22-րդ մաս*

*Հարց 606* **Ո՞վ է պատասխանատու հաստատության կողմից տնային ուսուցման կազմակերպման և գործընթացի վերահսկողության համար:**

- պատասխանատու է Հաստատության տնօրենը:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N 31-Ն հրաման, 3-րդ գլուխ, 19-րդ մաս*

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ (ԳՈՐԾԱԾՄԱՆ) ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 5**

*Հարց 607* **Ո՞վ է իրականացնում էլեկտրոնային դասամատյանի լրացումը (գործածումը)**

- առարկաները դասավանդող ուսուցիչները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 5

*Հարց 608* **Քանի՞ օրվա ընթացքում է Էլեկտրոնային դասամատյանում ուսուցիչը լրացնում դասացուցակով նախատեսված դասը՝**

- երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 6

*Հարց 609* **Ովքե՞ր են իրականացնում Էլեկտրոնային դասամատյանի վարման վերահսկողությունը:**

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Կրթության տեսչական մարմինը, լիազոր մարմինը, դպրոցի տնօրենը և տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը՝ դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում՝ իրենց վերապահված գործառնությունների շրջանակում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 7

*Հարց 610* **Քանի՞ տարի է ավարտական դասարանների դասամատյանների պահպանման ժամկետը.**

- 50 տարի

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 8

*Հարց 611* **Քանի՞ տարի է ոչ ավարտական դասարանների դասամատյանների պահպանման ժամկետը**

- 5 տարի:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, կետ 8

*Հարց 612* **Ի՞նչ է պարունակում աշխատողի անձնական էլեկտրոնային գործը:**

- աշխատողի աշխատանքային գործունեության մասին ամփոփ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի ամբողջությունն է, որը ձևավորվում և պահպանվում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում :

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս 2 կետ 1

*Հարց 613* **Ո՞վ է վարում հաստատության աշխատակցի անձնական գործը**

- Անձնական գործը վարում է հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը, կամ տնօրենի հրամանով նշանակված աշխատակիցը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս2 կետ 2

*Հարց 614* **Ի՞նչ է պարունակում սովորողի անձնական էլեկտրոնային գործը:**

- սովորողի անձնական էլեկտրոնային գործը սովորողի մասին ամփոփ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի ամբողջությունն է, որը ձևավորվում և պահպանվում է համակարգում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս3 կետ 1

*Հարց 615* **Ինչի՞ հիման վրա է ձևավորվում տարիֆիկացիոն մատյանը:**

- Տարիֆիկացիոն մատյանը ձևավորվում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դպրոցի դասարանների կոմպլեկտավորման, ուսումնական պլանի և դասաբաշխման հիման վրա՝ ինքնաշխատ եղանակով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրաման, մաս8 կետ

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**ԿԳՄՍ նախարարի 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման,**

*Հարց 616* **Քանի՞ տարվա համար է կազմվում հաստատության զարգացման ծրագիրը**

- 5

ԿԳՄՍ նախարարի 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս2, կետ 2

*Հարց 617* **Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:**

- հաստատության գործունեությունը.

ԿԳՄՍ նախարարի 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս2, կետ 2

*Հարց 618* **Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:**

- իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.

ԿԳՄՍ նախարարի 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս2, կետ 2

*Հարց 619* **Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:**

- նպատակների և խնդիրների սահմանումը.

ԿԳՄՍ նախարարի 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս2, կետ 2

*Հարց 620* **Թվարկվածներից ո՞րն է հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ:**

- սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.

ԿԳՄՍ նախարարի 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս2, կետ 2

*Հարց 621* **Թվարկվածներից ո՞րը հաստատության զարգացման ծրագրի բաղադրիչ չէ:**

- արդյունքային ցուցանիշները:

ԿԳՄՍ նախարարի 2022 թ.սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, մաս2, կետ 2

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ. N 38-Ն հրաման,

*Հարց 622* **Ի՞նչ նպատակով է կազմակերպվում երկարօրյա խմբերի ուսուցումը.**

- Երկարօրյա խմբերը ստեղծվում են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս1, կետ 2

*Հարց 623* **Ինչպե՞ս են համալրվում երկարօրյա խմբերը:**

- Երկարօրյա խմբերը համալրվում են ըստ կրթական աստիճանի (տարրական և/կամ միջին դպրոց) կամ զուգահեռ դասարանների:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 5

*Հարց 624* **Ո՞վ է հաստատում երկարօրյա խմբերի կազմը, դրանց հետ աշխատող մանկավարժական աշխատողների անվանական կազմը:**

- Հաստատության տնօրենը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 7

*Հարց 625* **Ո՞վ է հաստատում երկարօրյա խմբերի աշխատանքի տարեկան պլանը և ուսումնադաստիարակչական աշխատանքների կարգացուցակը:**

- Հաստատության տնօրենը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 7

*Հարց 626* **Ու՞մ կողմից են հաստատվում երկարօրյա խմբերի ծրագրերը**

- կրթության պետական լիազոր մարմնի կողմից

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 8

*Հարց 627* **Երկարօրյա խմբերի աշխատանքի կարգացուցակում փոփոխություններ կարող են կատարվել...**

- Հաստատության տնօրենի հրամանով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 10

*Հարց 628* **Ո՞վ է կազմում երկարօրյա խմբի (խմբերի) աշխատանքի կարգացուցակը և աշխատանքի տարեկան պլանը**

- տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման,  մաս2, կետ 11

*Հարց 629* **Որքա՞ն է երկարօրյա խմբերում ընդգրկված սովորողների թիվը, եթե խմբում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ:**

- 25

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 13

*Հարց 630* **Ինչպե՞ս կարող է բացվել սահմանված խտությունից պակաս խտությամբ երկարօրյա խումբ;**

- Հաստատության ֆինանսական միջոցների, իսկ մասնակի կամ լրիվ վճարովի խմբերում ծնողների վճարումների հաշվին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 14

*Հարց 631* ***Ինչպե՞ս է կազմակերպվում* երկարօրյա խմբերում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների  ծառայությունների մատուցումը**

- պետական միջոցների հաշվին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 15

*Հարց 632* **Հաստատության երկարօրյա խմբերը ձևավորում են մինչև ընթացիկ ուսումնական տարվա ...**

- սեպտեմբերի 10-ը և համալրվում են տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման, մաս2, կետ 17

*Հարց 633* **5-9-րդ դասարաններում երկարօրյա խմբում դասապատրաստմանը օրական քանի՞ ժամ է հատկացվում:**

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ.N 38-Ն հրաման,  մաս2, կետ 19

*Հարց 634* **Ի՞նչն է համարվում ուսուցչի մասնագիտական չափանիշը**

- ուսուցչի մասնագիտական զարգացման և գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության նկարագիրն է:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 1

*Հարց 635* **Ի՞նչ բաղադրիչներից է բաղկացած ուսուցչի մասնագիտական չափանիշը**

- զարգացման ոլորտներ, մասնագիտական գործունեության ձևեր, կարողունակության մակարդակներ, մանկավարժի բնութագրեր:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 2

*Հարց 636* **Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից.**

- ավագ ուսուցիչ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ1

*Հարց 637* **Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից.**

- հմուտ ուսուցիչ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ2

*Հարց 638* **Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից.**

- վերապատրաստող ուսուցիչ
    ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ3

*Հարց 639* **Թվարկվածներից ո՞րն է համարվում մանկավարժի մասնագիտական չորս չափանիշներից.**

- հետազոտող ուսուցիչ:
  ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ.օգոստոսի 5-ի N 30-Ն հրաման, մաս 8, կետ4

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրաման,

*Հարց 640* **Ըստ նպատակի սովորողների գնահատման քանի՞ տեսակ է կիրառվում**

- երեք տեսակ

    ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7

*Հարց 641* **Թվարկվածներից ո՞րն է սովորողների գնահատման տեսակ.**

- հայտորոշիչ գնահատում

    ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7

*Հարց 642* **Թվարկվածներից ո՞րն է սովորողների գնահատման տեսակ.**

- ձևավորող գնահատում

    ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7

*Հարց 643* **Թվարկվածներից ո՞րն է սովորողների գնահատման տեսակ.**

- ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

    ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 1, կետ 7

*Հարց 644* **Բնութագրող գնահատումն իրականացվում է՝**

- 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին.

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 6, կետ 47

*Հարց 645* **Ո՞րն է ձևավորող գնահատման խնդիրը:**

- սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 3, կետ 13

*Հարց 646* **Արդյո՞ք նշանակվում է միավոր ձևավորող գնահատման ժամանակ:**

- Ոչ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, մաս 3, կետ 23

*Հարց 647* **Ե՞րբ է սովորողը գնահատվում 10 միավոր:**

- Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, կետ 41

*Հարց 648* **Ե՞րբ է սովորողը գնահատվում 6 միավոր:**

- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, կետ 41

*Հարց 649* **Ի՞նչ է արձանագրում ուսուցիչը բնութագրող գնահատման ժամանակ:**

- սովորողի ինքնուրույնությունը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ.փետրվարի 24-ի N 11-Ն հրաման, կետ 45

## ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման,

*Հարց 650* **Ի՞նչ ընթացակարգով է իրականացվում տնօրենի ատեստավորման գործընթացը.**

- պարզ ընթացակարգով՝ դպրոցի զարգացման ծրագրի կատարման արդյունքների հիման վրա՝ փաստաթղթային եղանակով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 1, կետ 4

*Հարց 651* **Քանի՞ խմբի են բաժանվում տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջները:**

- երեք խմբի.

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6

*Հարց 652* **Թվարկվածներից ո՞րն է տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջներից:**

- կառավարչական գիտելիքներ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6

*Հարց 653* **Թվարկվածներից ո՞րն է տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջներից:**

- մասնագիտական գործունեության ձևեր

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6

*Հարց 654* **Թվարկվածներից ո՞րն է տնօրենի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջներից:**

- կառավարչական հմտություններ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 2, կետ 6

*Հարց 655* **Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում Ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:**

- ուսումնական հաստատության զարգացման ծրագիր

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10

*Հարց 656* **Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:**

- ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլաններ, տնօրենի վերջին նշանակումից հետո՝ պաշտոնավարման բոլոր տարիների համար

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10

*Հարց 657* **Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:**

- ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված ներդպրոցական վերահսկողության արդյունքների վերլուծություն՝ տնօրենի վերջին նշանակումից հետո՝ պաշտոնավարման բոլոր տարիների համար

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10

*Հարց 658* **Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:**

- զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություններ և կառավարման խորհրդի կողմից տրված եզրակացություններ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10

*Հարց 659* **Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը :**

- դպրոցում իրականացված ստուգումների, արտաքին գնահատումների, մշտադիտարկումների արդյունքների մասին տեղեկություններ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10

*Հարց 660* **Թվարկվածներից ո՞ր փաստաթղթի հիման վրա է իրականացվում ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման գործընթացը:**

- դպրոցում իրականացված լրացուցիչ ու այլընտրանքային ծրագրերի արդյունքների մասին տեղեկություններ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 10

*Հարց 661* **Ո՞ր դեպքում է տնօրենի աշխատանքը գնահատվում արդյունավետ:**

- «Արդյունավետ» է գնահատվում տնօրենի աշխատանքը, եթե Հաստատության զարգացման ծրագրի գնահատման սանդղակով սահմանված՝ զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 70%-ը գնահատվել է «Արդյունավետ»:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 13

*Հարց 662*. **Ո՞ր դեպքում է տնօրենի աշխատանքը գնահատվում զարգացնող:**

- «Զարգացնող» է գնահատվում տնօրենի աշխատանքը, եթե Հաստատության զարգացման ծրագրի գնահատման սանդղակով սահմանված ՝ զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 70%-ը գնահատվել է «Զարգացնող»:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի դեկտեմբերի 5-ի N 76-Ն հրաման, մաս 3, կետ 14

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ, ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ՈՒՍՈՒՑՉԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշում,**

*Հարց 663* **Ոչ պետական ուսումնական հաստատության ուսուցիչը, ով մասնակցել է կամավոր ատեստավորման գործընթացին, ինչպե՞ս է վարձատրվում:**

- կարող է վարձատրվել հիմնադրի ֆինանսական միջոցների հաշվին:

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ6

*Հարց 664* **Ո՞վ կարող է դիմել ուսուցչի կամավոր ատեստավորման գործընթացին:**

- չաշխատող անձը:

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 5.1

*Հարց 665* **Թվարկվածներից ո՞ր ձևով չի կարող անցկացվել կամավոր ատեստավորման գործընթացը:**

- Բանավոր

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 7

*Հարց 666* **Ի՞նչ լեզվով են կազմվում ռուսերենով ուսուցմամբ դասարանների դասվարների համար թեստերը:**

- Ռուսերենով:

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 12

*Հարց 667* **Դպրոցից դպրոց տեղափոխման արդյունքում՝**

- հավելավճարը  պահպանվում է:

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 75

*Հարց 668* **Ատեստավորման արդյունքում նախորդ արդյունքի համեմատ ավելի բարձր արդյունք ցուցաբերելու դեպքում ուսուցիչը հավելավճար է ստանում՝**

- վերջին արդյունքի հիման վրա, որի համար սահմանվում է հավելավճար ստանալու հնգամյա նոր ժամկետ.

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 77

*Հարց 669* **Ատեստավորման արդյունքում  նախորդ արդյունքին հավասար արդյունք ցուցաբերելու դեպքում**

- ուսուցչի հավելավճարի չափը պահպանվում է, որի համար սահմանվում է հնգամյա նոր ժամկետ.

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 77

*Հարց 670* **Ատեստավորման արդյունքում նախորդ արդյունքի համեմատ ավելի ցածր արդյունք ցուցաբերելու դեպքում**

- հավելավճարը պահպանվում է արդեն սահմանված ժամկետով:

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 77

*Հարց 671* **Հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական այլ հաստատությունում համատեղությամբ աշխատող ուսուցիչն՝**

- ատեստավորվում է հիմնական աշխատավայրում դասավանդող առարկայից:

ՀՀ կառավարության 2022 թվականի
ապրիլի 28-ի N 596-Ն որոշում, մաս 1, կետ 80

**Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար-**

*Հարց 672* **Ո՞ր խմբերը կարելի է համարել համագործակցային:**

- Այն խմբերը, որի անդամները գիտակցում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:

*գլ. 1, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչափրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ -Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ*

*Հարց 673* **Ինչո՞վ է պայմանավորված դասի ընթացքում կիրառվող մեթոդների ընտրությունը՝**

- Դասի նպատակով:

*գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչափրյան Ս., Խրիմյան Ս., ետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ*

*Հարց 674* **Ի՞նչ է ուսուցման մեթոդը:**

- Մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն:

*գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա.,*

*Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ*

*Հարց 675* **Նշվածներից ո՞րն է կրթության բովանդակային բաղադրիչներից՝**

- Կարողությունները և հմտությունները

*Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.- 180 էջ*

***Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար***

*Հարց 676* **Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ՝**

- Էքսկուրսիա:

*գլ. V, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 677* **Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ՝**

- Ցուցադրում:

*գլ. V, Ղուլումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 678* **Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ՝**

- Դիտում

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 679* **Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ՝**

- Իլյուստրացիա:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 680* **Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ՝**

- Զրույց:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 681* **Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ՝**

- Դասախոսություն:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 682* **Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ՝**

- Աշխատանք դասագրքով:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 683* **Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ՝**

- Վարժություններ:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 684* ***Նշվածներից*** **ո՞րն է գործնական մեթոդ:**

- Գործնական աշխատանքներ:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 685* **Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ՝**

- Լաբորատոր աշխատանքներ:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 686* **Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:**

- Ճանաչողական խաղեր:

*գլ. V, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 687* **Ի՞նչ ենք հասկանում կարողություն ասելով՝**

- Կարողությունները գիտելիքներն են գործողության մեջ:

գլ. I, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: *Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 688* **Ի՞նչ ենք հասկանում «հմտություն» ասելով:**

- Հմտությունները կարողությունների կառուցվածքում ձևավորված գործունեության առանձին դրսևորումների ավտոմատացված տարրերն են:

*գլ. I, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 689* **Նշվածներից ո՞րն է դաստիարակության մեթոդ:**

- Դրական օրինակի մեթոդը:

*Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք II , /– Եր.: Զանգակ-97, 2005թ., գլ. IV, 232 էջ*

*Հարց 690* **Նշվածներից ո՞րն է արտահայտում նպատակ դասի գործունեության հասկացության բովանդակությունը՝**

- Նպատակը ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնական արդյունքն է:

գլ. I, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: *Գիրք I, Գիրք II /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ*

*Հարց 691* **Ի՞նչ հիմնական հարցերի է կոչված պատասխանելու դիդակտիկան՝**

- Ի՞նչ սովորեցնել և ինչպե՞ս սովորեցնել հարցերին:

*Բաժին 2, Ղույումչյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I /– Եր.: Զանգակ-97, 2005թ., 232 էջ*

**Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար**

*Հարց 692* **Ի՞նչ ենք հասկանում ակտիվ ուսումնառություն ասելով:**

- Ակտիվ ուսումնառության ընթացքում սովորողները սոսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն դառնում են և' մասնակից, և կատարող:

*Բաժին 1, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոքի Ֆ.*

*/Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի փնօրենների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ,*

*Հարց 693* **Ի՞նչ ենք հասկանում կազմակերպության առաքելություն ասելով՝**

- Առաքելությունը կազմակերպության համար ցանկալի ապագայի մտապատկերն է:

*Բաժին 2, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոքի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի փնօրենների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ,*

**Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն**

*Հարց 694* **Ո՞րն է սովորողների գնահատման գլխավոր նպատակը:**

- Կրթության որակի բարելավումը:

*Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնա-հափման մեթոդաբանություն/, ՀՀ Կրթության և գիփության նախարարություն, 2008թ*

**Ներառական կրթության ռազմավարություն**

*Հարց 695* **Ուսուցչի օգնականը՝**

- աշխատում է ուսուցչի վերահսկողությամբ՝ աշակերտներին ուշադրության կենտրոնում պահելու և ուսուցմանն օժանդակելու համար:

*Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրապարակություն, Երևան, Ասողիկ, 2020*

*Հարց 696* **Համատեղ դասավանդումը՝**

- մանկավարժների կամ այլ մասնագետների գործընկերությունն է՝ դասարանի ներսում տարբեր կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու համար:

*Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,*
*երկրորդ հրապարակություն, Երևան, Ասողիկ, 2020*

*Հարց 697* **Բազմամասնագիտական թիմը՝**

- բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում:

*Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,*
*երկրորդ հրապարակություն, Երևան, Ասողիկ, 2020*

**Հանրակրթական դպրոցի ,Ֆիզիկական կուլտուրայի առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12-րդ դասարաններ**

*Հարց 698 .* **Ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության իրականացման համար ինչպիսի՞ նվազագույն պայմաններ են անհրաժեշտ՝**

- Կահավորված մարզադահլիճ, մարզագույք և համալիր մարզահրապարակ:

*Գրիգորյան Յու., Մինասյան Հ. /Հանրակրթական դպրոցի ,Ֆիզիկական կուլտուրայի առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12-րդ դասարաններ/ ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան 2007թ.*

***Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ***

*Հարց 699* **Դպրոցական բռնությունը՝**

- բռնությունը տարատեսակ է, որի դեպքում ուսուցիչների (կամ աշակերտների) կողմից ուժ է կիրառվում աշակերտների նկատմամբ կամ, ինչը պատահում է չափազանց հազվադեպ, աշակերտների կողմից ուժ է կիրառվում ուսուցչի նկատմամբ:

*Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016*

*Հարց 700* **Դպրոցական բռնությունը՝**

- կարող է լինել հուզական և ֆիզիկական բնույթի:

*Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016*

*Հարց 701* **Հուզական բռնության ձև է՝**

- Ծաղրը, մականուններ կպցնելը, անվերջ նկատողությունները, ոչ օբյեկտիվ գնահատականները, ստորացումն այլ երեխաների ներկայությամբ և այլն:

*Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016.*

*Հարց 702* **Դպրոցում հոգեբանական անվտանգ միջավայրը**.

- փոխազդեցության այն միջավայրն է, որն ազատ է հոգեբանական բռնության դրսևորումներից և ռեֆերենտային նշանակություն ունի աշակերտների համար:

*Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016*

*Հարց 703* **Դասարանի ղեկավարը՝**

- իրականացնում է ընդհանուր մանկավարժական կառավարում՝ սերտորեն համագործակցելով ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018*

*Հարց 704* **Ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է՝**

- Սովորողների ստեղծագործական ընդունակությունների ձևավորման և զարգացման գործառույթը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2018*

*Հարց 705* **Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ առաջին խումբը՝**

- նորարարներն են, որ մշտապես ձգտում են նորի իրագործմանը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018*

*Հարց 706* **Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ երկրորդ խումբը՝**

- նորամուծությունների վաղ իրականացնողներն են, որ անմիջապես գնում են նորարարների հետևից, բայց նրանցից տարբերվում են ցածր ռիսկի աստիճանով և հանդես են գալիս որպես խորհրդականներ:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018*

*Հարց 707* **Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ երրորդ խումբը՝**

- յուրացնում են նորամուծությունները անմիջապես վաղ իրականացնողների հետ, բայց հազվադեպ են հանդես գալիս առաջնորդի դերում:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018*

*Հարց 708* **Մոտիվացիոն միջավայրը՝**

- պայմանների ամբողջությունն է, որով որոշվում է դպրոցի նպատակներին հասնելու մանկավարժական կոլեկտիվի անդամների ջանքերի ուղղությունն ու մեծությունը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 709* **Մանկավարժական կոլեկտիվը՝**

- միմյանց հետ աշխատող մանկավարժների խումբ է, որն ունի ընդհանուր նպատակներ, որոնց իրականացումը նրանց համար անձնական նշանակություն ունի, և, իրացնելով միջանձնային փոխհարաբերությունների և փոխգործակցության գործընթացը, նպաստում է ընդհանուր նպատակների իրագործմանը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 710* **Կառավարման գործընթացը՝**

- գործողությունների հաջորդականություն է, որն իրականացվում է կառավարող սուբյեկտի կողմից, և որի արդյունքում ձևավորվում ու ձևափոխվում է կառավարվող օբյեկտը, ճշգրտվում և որոշվում են համատեղ գործունեության նպատակները և նրանց հասնելու միջոցները, բաժանվում է աշխատանքը նրա մասնակիցների միջև, միավորվում են ջանքերը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ,*

*Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 711* **Դպրոցի զարգացում ասելով պետք է հասկանալ՝**

- կառավարման գործընթացի որակական փոփոխության յուրահատուկ տեսակ, որպես վերընթաց շարժում ներքևից դեպի վեր, որպես անցում մի որակական վիճակից մյուսին՝ ավելի կատարյալին, որպես հին վիճակից անցումը նոր առաջընթաց վիճակի:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 712* **Կրթության համակարգի կառավարման մեթոդ ասելով պետք է հասկանալ՝**

- կառավարչական գործողության այն եղանակը, որի գործադրմամբ տեղի է ունենում կառավարվող սուբյեկտի ներգործությունը կառավարվող օբյեկտի վրա՝ նրա գործունեությունը ղեկավարելու, կանխատեսելու, պլանավորելու, կազմակերպելու, կարգավորելու, ակտիվացնելու, վերահսկելու և ավելի արդյունավետ դարձնելու համար:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 713* **Կրթության համակարգի նպատակային-պլանային բաղադրամասը՝**

- իր մեջ ներառում է ենթահամակարգերին վերաբերող նպատակների, խնդիրների, նախագծերի բազմաձևությունը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 714* **Կրթության համակարգի ծրագրային-բովանդակային բաղադրամասը՝**

- արտացոլում է գործունեության խնդիրների ներքին բովանդակությունը, որն իրականացվում է դիդակտիկական որոշակի սկզբունքների և մեթոդների միջոցով:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 715* **Կրթության համակարգի կազմակերպչական-կառավարչական բաղադրամասը՝**

- կրթության կառավարման բարձրագույն օրգանի (ԿԳՄՍՆ) և կառավարվող համակարգերի (նախակրթարանների, դպրոցների, արտադպրոցական հիմնարկների) փոխներգործությունն ու համագործակցությունն է, որը կառավարման առաջին մակարդակն է: Երկրորդ մակարդակը ներհամակարգային կառավարման մակարդակն է

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 716* **Կրթության համակարգի գործունային բաղադրամասը՝**

- արտացոլում է կառավարող և կառավարվող համակարգերի աշխատողների միջև եղած սուբյեկտ-օբյեկտային, օբյեկտ-սուբյեկտային և սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունները:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 717* **Կրթության համակարգի վերահսկողական-արդյունքային բաղադրամասը ՝**

- արտացոլում է կառավարման գործընթացի արդյունավետությունը, ընթացքը, բնութագրում է իրականացվող խնդիրները և ձեռք բերված արդյունքները:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ,*

*Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 718* **Գործնականում կառավարչական խնդիրները լուծվում են փուլերով, որն իրենից ներկայացնում է ավարտուն պարբերաշրջան: Այդ փուլերից է՝**

- իրադրության ուսումնասիրումը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 719* **Գործնականում կառավարչական խնդիրները լուծվում են փուլերով, որն իրենից ներկայացնում է ավարտուն պարբերաշրջան: Այդ փուլերից է՝**

- գործունեության պլանավորումը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 720* **Գործնականում կառավարչական խնդիրները լուծվում են փուլերով, որն իրենից ներկայացնում է ավարտուն պարբերաշրջան: Այդ փուլերից է՝**

- մանկավարժական գործընթացի հայտորոշումը և կարգավորումը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ,*

*Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 721* **Գործնականում կառավարչական խնդիրները լուծվում են փուլերով, որն իրենից ներկայացնում է ավարտուն պարբերաշրջան: Այդ փուլերից է՝**

- ներգործությունների կոորդինացումը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 722* **Գործնականում կառավարչական խնդիրները լուծվում են փուլերով, որն իրենից ներկայացնում է ավարտուն պարբերաշրջան: Այդ փուլերից է՝**

- վերահսկումը և արդյունքների գնահատումը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 723* **Գործնականում կառավարչական խնդիրները լուծվում են փուլերով, որն իրենից ներկայացնում է ավարտուն պարբերաշրջան: Այդ փուլերից է՝**

- արդյունքների վերլուծությունը և մշակումը:

*Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան,Արտագերս, 2021*

*Հարց 724* **Ո՞րն է կառավարման համակարգի վրա ազդող ամենաբացասական գործոնը՝**

- Նպատակի սխալ ընտրությունը:

*Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,*

*“Психология управления”. Харьков, 1998г.*

*Հարց 725* **Ղեկավարման ավտորիտար ոճն առավելապես ի՞նչ իրավիճակներում է նպատակահարմար:**

- **Ռազմական:**

*Гл.6, 8 Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,*

*“Психология управления”. Харьков, 1998г*

*Հարց 726* **Աշխատակիցների հետ դպրոցի տնօրենի հարաբերություններում ո՞ր ոճին պետք է տալ նախապատվություն՝**

- **ժողովրդավարական ոճին:**

*(Бандурка А. М., Бочарова С. П., Землянская Е. В.,*

*“Психология управления”. Харьков, 1998г.)*

***Կոլեկտիվ ուսուցման փարրերը: Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար***

*Հարց 727* **Ո՞րն է կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունը՝**

- Տարբեր աշակերտներ կարող են զբաղվել տարբեր ուսումնական առարկաներով, ընդմիջումներ անել տարբեր ժամանակահատվածներում:

*(Մ.Ա.Մկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման փարրերը: Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության*

*<<Բյուրակն>> կրթական համալիր:Երևան 2009 թվական)*

*Հարց 728* **Կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում որո՞նք են ուսումնական խմբի անդամի գործունեության առանձնահատկությունները՝**

- Սովորող է, սովորեցնող և աշխատանքի կազմակերպող :

*(Մ.Ա.Մկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը: Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության <<Բյուրակն>> կրթական համալիր:Երևան 2009թվական)*

**Մանկավարժություն**

*Հարց 729* **Սոցիալական մանկավարժությունը գիտություն է .**

- անձի անհատականության ձևավորման վրա սոցիալական միջավայրի ազդեցության, այդ միջավայրին նրա հարմարման, սոցիլական փորձի յուրացման մասին:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 730* **Ի՞նչ է մարդու աշխարհայացքը.**

- շրջապատող իրականության՝ բնության և հասարակության վերաբերյալ մարդու համոզմունքների, հայացքների, դիրքորոշումների համակարգը,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 731* **Ի՞նչ է Սոցիալականացումը .**

- անհատի մարդու փոխգործակցությունն է շրջակա միջավայրի հետ, սոցիալական նորմերի, արժեքների յուրացման գործընթացն է:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 732* **Ի՞նչ է անձի դաստիարակության մեթոդը.**

- կրթված անձի գիտակցության, կամքի և զգացմունքների վրա ազդելու միջոց՝ նրա մոտ որոշակի համոզմունքներ զարգացնելու համար:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 733* **Ի՞նչ է Պատիժը.**

- մանկավարժական ազդեցության մեթոդ, որը կանխում է անցանկալի գործողությունները:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 734* **Անհատականությունը մանկավարժության մեջ արտահայտվում է որպես բազմություն**

- միայն տվյալ անհատին հատուկ տարբերիչ, հատուկ հատկանիշների համալիր:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 735* **Դիդակտիկան մանկավարժության բաժին է, որն ուսումնասիրում է.**

- մարդու իմացական գործունեության օրինաչափությունները, ուսուցման սկզբունքները, մեթոդները, միջոցները, ձևերը, տեխնոլոգիաները, ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ձևերն ու մեթոդները:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 736* **Ի՞նչ է Ինքնակրթությունը՝**

- ցանկացած տարիքում կրթական համակարգից դուրս ուսանողի նախաձեռնած գիտելիքների ձեռքբերման և հմտությունների զարգացման գործընթացը,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 737* **Մանկավարժական փորձը՝**

- մանկավարժական գործընթացի վերահսկվող վերափոխումը գիտական վարկածը հիմնավորելու համար:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 738* **Մանկավարժական հետազոտության մեթոդները ներառում են**

- տեսական մեթոդները, էմպիրիկ մեթոդները, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդները,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 739* **Ձևավորող փորձը մանկավարժության մեջ.**

- պահանջում է հատուկ մշակված առաջադրանքներ մանկավարժական վարկածը ստուգելու համար,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 740* **Խաղային գործունեությունը կրտսեր դպրոցական տարիքում .**

- մնում է կարևոր, բայց օժանդակ,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 741* **Անձնական շփումը դառնում է առաջատար գործունեություն**

- դեռահասության շրջանում:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 742* **Ինքնագիտակցության ճանաչողական բաղադրիչը ներառում է.**

- ինքնաճանաչումը:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 743* **Ուսուցման գործընթացում գործում են.**

- արժեքային հարաբերությունները,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 744* **Մանկավարժության՝ որպես գիտության զարգացումը պայմանավորված է.**

- կրթության թվայնացմամբ և ինտենսիվ ինովացիոն գործընթացներով:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 745* **Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներն են.**

- ուսուցման համագործակցային, կոլեկտիվ,նախագծային, զարգացնող, խաղային, թվային տեխնոլոգիաներ,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 746* **Դպրոցի կառավարման գործառույթներն են.**

- կանխատեսման, հայտորոշման, հաղորդակցական, պլանավորման, կազմակերպման, վերահսկման,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 747* **Դասի արդյունավետությունն ապահովում են.**

- ուսուցման միջոցները, մեթոդներն ու տեխնոլոգիաները:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 748* **Ուսուցչի կոմպետենտության բաղադրիչներն են.**

- հաղորդակցական, առարկայական, մասնագիտական, ռեֆլեքսիվ:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 749* **Ընդհանուր մանկավարժության խնդիրներ են.**

- Կրթության և դաստիարակության ոլորտում օրինաչափությունների բացահայտումն ու ուսումնասիրումը, կրթադաստիարակչական համակարգերի կառավարումը:

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 750* **Սոցիալական փորձի փոխանցման անհրաժեշտություն առաջացավ**

- հասարակության առաջացման հետ միաժամանակ,

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

*Հարց 751* **Գիտական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների համակարգ, որը թույլ է տալիս սովորել խիստ որոշակի գիտաճյուղի հիմնական դրույթները:**

- Ուսումնական առարկա

Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Ջ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017, 360 էջ:

## Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ

*Հարց 752* **Ուսուցչի գործունեության ոճ, որում վերջինս միայնակ է որոշումներ կայացնում:**

- Ավտորիտար

Թոփուզյան Ա.Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Եր.: Լինգվա, 2009թ

*Հարց 753* **Անձի նպատակաուղղված ձևավորման գործընթաց:**

- Դաստիարակություն

Թոփուզյան Ա.Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Եր.: Լինգվա, 2009թ

*Հարց 754* **Ո՞րն է մանկավարժության այն ուղղությունը, որը զբաղվում է տեղեկատվական տեխնոլոգիական գործիքների մանկավարժականացմամբ:**

- Մեդիակրթություն

Թոփուզյան Ա. Օ. , Գյուլամիրյան Ջ. Հ. և ուրիշներ, Մեդիակրթությունը տարրական դպրոցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր. , 2019